

ԶԱՅՆ

ՀԱՄՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅԻՆՆԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

Կրասնոդար քաղաքի կենտրոնում վեր է խոյանում սպիտակ մարմարե հաղթական մարտի հուշարձանը, որի վրա գրված են երկրամասի ծնունդը հորհրդային Միության հերոսների և նրանց շարքում՝ 9 հայորդիների անուններ՝ Մանուկյան Գ. Բ., Մելքոնյան Ա. Խ., Մուրադյան Ա. Գ., Նահույան Մ. Կ., Սարկիսով Ֆ. Ի., Յագոբյան Դ. Մ., Սնուպյան Գ. Գ., Շալոյան Մ. Մ., Թամբիկ Կ. Գ.:

Ֆոթո գյուղեր, շատ բնակիչների գնդակահարեցին կամ հարկադիր աշխատանքի ուղարկեցին Գերմանիա: Միայն Կարմիր Երզնկայից 170 հոգու քչեցին Գերմանիա, Սուկո հայկական գյուղում կախեցին ու գնդակահարեցին 48 հոգու, Հայկաձորում՝ 45: Նույն Հայկաձորից 127 հոգի պարտիզան դարձավ, նրանց մեջ էր նաև երիտասարդ Հասմիկ Բաղեյանցը, որը

տակյա կազմակերպության ղեկավարներից էր Սուրեն Հարությունյանը: Պարտիզանական ջոկատների կոմիսարներ էին Տ. Էկիսյանն ու Ս. Մարգարյանը: Կուրգանսկի պարտիզանական ջոկատում գումարտակի հրամանատար էր Օհան Գրիգորյանը, իսկ «Գրոզնի» ջոկատում գումարտակի հրամանատար էր Հակոբ Ոսկանյանը: Նովոռոսիյսկի շրջանի

մեջ. - Գերմանացիները մեր գյուղ եկան օգոստոսի 8-ի երեկոյան: Մերոնցից շատերը հեռացան անտառները: Գերմանական օկուպացիայի տարիներին մեր անտառներում 1600 պարտիզան կար:



Հուշարձան Սերգեյ Պոլե գյուղում:

Նրանց մեջ նաև շրջափակման մեջ ընկած գործադատներից շատ մարտիկներ, որոնք պարտիզաններին միացած քաջության ու անձնագոհության բազմաթիվ օրինակներ տվեցին: Իմ ավագ եղբայրը նույնպես պարտիզան էր, իսկ ես այն ժամանակ 14-15 տարեկան էի և մանր-մունր հանձնարարություններ էի կատարում:

Նրանք պայթեցնում էին գերմանական էլեկտրոկայանները, ազատում գերության քչվող մարդկանց: Մեր գյուղում երկու տուն չկա, որ վիրավոր պարտիզան թաքցրած չլինի, երբեմն երեք-չորս ամիս խնամում էին, որ ապաքինվեն: Ո՛չ կարգին բժիշկ կար, ո՛չ դեղորայք, ո՛չ հագուստ, ո՛չ ուտելիք, եղածն էլ եղբայրաբար կիսում էինք պարտիզանների հետ: Իսկ ի՞նչ ունեինք՝ մեկ երկու կով, շատերն այր էլ չունեին: Մի օր էլ՝ 1942-ի դեկտեմբերին, գերմանացիները լցվեցին գյուղերը, բոլոր անասունները հավաքեցին, որ քչեն Գերմանիա: Մեր գյուղի տղաներն ու մյուս պարտիզանները՝ 34 հոգի, թիֆլիսեցի Միրաբ Միրաբյանի ղեկավարությամբ ետ խլեցին 120 կով և վերադարձրեցին գյուղացիներին: 1943-ի հունվարի 28-ին Մայկոպից մի զինված մարդ եկավ մեր տուն, ասաց, որ պետք է պարտիզանական երկրորդ խմբին շտապ հայտնել, որ այդ գիշեր ընդհանուր հարձակում է լինելու: Ես գնացի պարտիզանների մոտ՝ այստեղից մի 10 կմ հեռու, ասացի, և նույն գիշերը պարտիզանները 200 գերմանացի զինվոր գերեցին:

Սրանք Մայկոպի շրջանի պարտիզանական պայքարի փոքրիկ դրվագներն են միայն, իսկ այդ հերոսապատման քա՛նի-

ՄԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆՆԱՏԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳԻՐՆ Է



Շահումյանի ազատագրման համար զոհված 700 մարտիկներին նվիրված հուշարձանը:

Նրանց կողքին ոսկե տառերով են գրված նաև մարտական Փառքի երեք աստիճանի շքանշանակիրներ կրասնոդարցի Գրիգոր Հովսեփի Կարապետյանի, մայկոպցի Սերգեյ Արմենակի Սիվիկյանի և Եյսկի Ալեքսանդր Գալուստի Ալաֆերդովի անունները:

Խորհրդային Միության 4 հերոս էլ տվել են Աբխազիայի հայերը՝ Սիրիան Բուստանջյան, Երվանդ Գարանյան, Հարություն Մելքոնյան, Հարություն Չաքրյան, նաև մարտական Փառքի երեք աստիճանի շքանշանի ասպետ, գանձադրոհի Հարություն Վարդերեսի Շուշանյան:

1942թ. օգոստոսին գերմանացիները գրավեցին Կրասնոդարը, Մայկոպն ու Արմավիրը: Իրենց «արիացիներ» հռչակած գերմանացիները, ցանկանալով սիրաշահել լեռնականներին, այստեղ հանդես եկան որպես դուրանի մոլի պաշտպաններ: Առաջին տանկային բանակի հրամանատար գեներալ Մակենզեմ մահմեդականություն ընդունեց, իսկ տեղի ֆաշիստամետ տարրերը Հիտլերին հռչակեցին Կովկասի «Մեծ իմամ»:

Գերմանացիները Կրասնոդարի երկրամասում ավերեցին բազմաթիվ մեծ ու

բազմաթիվ հույժ կարևոր առաջադրանքներ կատարելուց հետո մատնությամբ ընկավ հիտլերականների ձեռքը: Չմայած դաժան տանջանքներին նա ոչինչ չհայտնեց հայկաձորցի պարտիզանների մասին: Այդ ամենից կատաղած գերմանացիները շիկացած երկաթով այրեցին նրա լեզուն: Մեկ ամիս անց պարտիզաններն ազատեցին անվճար աղջկան, որը շարունակելով պայքարը 1943թ. զոհվեց:

Կրասնոդար քաղաքի հայկական թատերախմբի ղեկավար Երմոնյա Դուրլուկյանը և ակտիվ հակաֆաշիստական աշխատանք էր կատարում: Նրան ձերբակալեցին և տասն օր խոշտանգեցին: Նա տանջամահ եղավ, բայց այդպես էլ ոչինչ չհայտնեց ընդհատակյա ընկերների և պարտիզանների մասին: Նույն կերպ տանջամահ արվեց նաև նրա ընկերուհին՝ Կրասնոդարի մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի Թամարա Օղիկյանը:

Տաշխտական գազանությունները ոտքի հանեցին բազմաթիվ հայորդիների: Կրասնոդարի քաղկոմի քարտուղար, հայագի Մարկ Աբգարի Պոպովի ջանքերով ստեղծվեցին պարտիզանական մի քանի ջոկատներ: Պարտիզանական շարժման բոցը բռնել էր ողջ երկրամասը և երեկվա հողագործների ու ֆիդայիների որդիները ընդամենը երկուսուկես տասնամյակ առաջ գերմանացիների քաջալերմամբ ու օգնությամբ սկսված եղեմի զոհերի՝ իրենց ծնողների, քույրերի ու եղբայրների վրեժն էին լուծում:

Ամենուր էին հայ պարտիզանները. Արմավիրում գործում էր Ավանեսովի ընդհատակյա խմբակը, Եյսկի ընդհա-

Կրիմսկի ջոկատի կոմիսարն էր Ա. Եկիմյանը: Ջոկատի կոմիսար էր նաև Գելենջկի շրջանի Միխայլովսկի Պերեվալ խորհրդային տնտեսության տնօրեն Գրիգոր Խլիյանը:

Տուլսկիի անտառներում էր գործում Արթուր Թորոսյանի հարյուր հոգանոց ջոկատը: Քաղաքացիական պատերազմում և Մեծ Հայրենականում զոհված պարտիզանների հիշատակին Տուլսկիում հուշարձան է կանգնեցված. 1918-1922 թթ. քաղաքացիական պատերազմի տարիներին այստեղ 21 հայ է զոհվել, որոնց անունները խոշոր տառերով գրված են հուշարձանի ծախ կողմում, իսկ աջում՝ Մեծ հայրենականում Տուլսկիում զոհված պարտիզանների անուններն են: Պետրոսյան Մ. Ա., Ռոզոնյան Ա. Ն., Թահմազյան Ա. Ա., Թահմազյան Ա. Ա., Թահմազյան Թ. Ջ., Թահմազյան Լ. Կ., Շատուրյան Կ. Ն.:

Մեծ հայրենականի ռազմաճակատներում և Տուլսկիից շատ հայեր են զոհվել. միայն Քուլյան ընտանիքից չորս եղբայրներ չվերադարձան պատերազմից, իսկ Սերգեյ-Պոլե հայկական գյուղից 154-ը դարձան զինվոր, նրանցից 76-ը զոհվեց, նրանց հետ Հովհաննես Երեմյանի հինգ որդիները:



Սերգեյ-Պոլե. Երեմյանների տունը:

Բազմաթիվ պարտիզանական ջոկատներ էին գործում նաև Մայկոպյան անտառներում: Մայկոպի շրջանի Պրոլետարսկի հայկական գյուղում հիմնականում տրապիզոնցիներ են ապրում, որոնք սրբորեն են պահպանել նախնիների ավանդույթները, երգերն ու ռազմաշունչ պարերը: Պատերազմի ավարտից տասնամյակներ անց էլ գյուղից արևելք, անտառներում մնացել էին պարտիզանական գետնափոր խրճիթները, գերմանական երեք ջարդված մեքենաներ, պատերազմի այլ հիշակատներ: Տարիներ առաջ Պրոլետարսկի գյուղի դպրոցի ուսմասվար Արտավազ Գասպարյանն ինձ պատ-



Հուշարձան Բերանդա գյուղում:

քանի սիրամանրեր գրի չառնվելով անհայտ են մնացել:

Ահեղ մարտեր էին մղվում նաև Հայկական (Արմյանսկի) ազգային շրջանում, որով անցնում էր Մայկոպ-Տուսապե մայրուղին: Քչերը գիտեն, որ 1926-1953թթ. Կրասնոդարի երկրամասում գոյություն ուներ Հայկական ազգային շրջան, որն ընդգրկում էր 60-ից ավելի հայկական գյուղ ու գյուղակ, հրատարակվում էր հայերեն «Կոմունար» թերթը, սփռվում էին հայերեն ռադիոհաղորդումներ:

Գերմանացիները Հայկական ազգային շրջանը զավթեցին 1942թ. օգոստոսին: Մինչ այդ ձևավորվել էր Ստեփան Շահումյանի անվան պարտիզանական ջոկատը, որի ղեկավարն էր շրջափոխի գործկոմի նախագահ Անդրանիկ Մալխասյանը: Զուկատը բազմաթիվ մարտեր է մղում, կա-



Տեսարան Շահումյան գյուղից:

տարում տասնյակ առաջադրանքներ: Նոյեմբերի 12-ին, մի անձրևոտ օր, Մալխասյանը 6 հոգանոց խմբով գնում է թշնամու դիրքերը պարզելու: Նրանց նկատում են: Պարտիզանները ստիպված կռվի են բռնվում գերմանական զորամասի հետ: Շուտով վերջանում են փամփուռները և պարտիզանները նետվում են սվինամարտի: Անհավասար կռվում զոհվում է Անդրանիկ Մալխասյանը, վիրավոր Միսաքը և Ռուբենը գերվում են: Բայց նրանք հայկական Գունայկա գյուղի ճանապարհին սպանում են գերմանացիներին և միանում իրենց ընկերներին:

Շուրջ երկու տասնամյակ առաջ Չեռնիգովսկ գյուղում, պատերազմի վետերան Նշան Զեյթունյանն ինձ ցույց տվեց մանկապարտեզի բակում, դարավոր ծառերի ստվերում տեղադրված մի փոքրիկ հուշարձան. 1943թ. օգոստոսին այստեղ են տեղափոխվել Անդրանիկ Մալխասյանի ու նրա զինակիցների, ինչպես նաև Գրոզնի հայկական գյուղից զնդակահարված 5 գյուղացիների աճյունները: Չեռնիգովսկը բավականին մեծ գյուղ էր, շուրջ հազար տնտեսությամբ: Գյուղի գլխավոր փողոցը, որտեղ գտնվում էր եղբայրական գերեզմանը, կոչված էր Մալխասյանի անունով:

Հայկական ազգային շրջանի բնակչությանը փրկել, կերակրել ու բուժել է վիրավոր ռազմիկներին, հաճախ օգնել է մեր զորքերին անձանոթ վայրերում կողմնորոշվելու: Արխիվային փաստաթղթերից



Անդրանիկ Մալխասյանի և զինակիցների մկրված հուշարձանը Չեռնիգովսկում:

մեկը վկայում է, որ Հայկական շրջանի բնակիչներից «առանձնացվեց 15 մարդ, որպես ուղեցույցներ և զորային հետախույզներ: Նրանք բոլորն էլ իրենց առաջադրանքը կատարեցին գերազանց»: Այդպիսի մի ուղեցույց է եղել Կարապետ Ռահմանյանը: Նրա աղջկան՝ տիկին Գայանեին տարիներ առաջ հանդիպեցի Գունայկա գյուղում:

- Այն ժամանակ ապրում էինք Նևտեգորսկ գյուղում: Դպրոցական արձակուրդին գնացել էինք Ռժեստ՝ 105-ամյա պապիս տուն: Պատերազմը սկսվեց և մենք մնացինք այնտեղ: Հայրս պարտիզան էր և քանի որ լավ ծանոթ էր ամեն մի կածանին, շատ անգամներ է մեր զորամասերին, նաև 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի մարտիկներին օգնել անցնելու լեռնային ճանապարհներով: Պատերազմի

ավարտից հետո հայկական դիվիզիայի հրամանատարներից մեկը Նեֆտեգորսկի թերթի միջոցով գտավ հորս, ապա եկավ Ռժեստ: Հետո հայրս գնաց Երևան, մի 15 օր մնաց և երբ վերադարձավ, կարծես նորից ծնված լինեք: Ասաց, որ մենք չգիտենք, թե ինչ հիանալի մարդիկ են ապրում Հայաստանում, պետք է անպայման գնանք Հայաստան, բայց նա երկար չսպասեց ու նրա երազանքը չիրականացավ:

Տիկին Գայանեի ամուսինը՝ համաձայնի նշանավոր գունաչի Վարդան Զեբեյանի որդին՝ Գևորգ Զեբեյանը ևս պատերազմի մասնակից է, կռվել է Կրասնոդարի երկրամասի ազատագրության համար, վիրավորվել է Մալայա Զեմլյայում, 1945-ին կոնտուզիա ստացել, այնուհետև որպես հեծելազորային ծառայել Իրանում:

- Այնտեղ շատ հայերի հանդիպեցի, հիանալի մարդիկ էին, զինի հյուրասիրեցին, - ասում է նա ու լռում: Ո՞վ գիտի պատերազմական որ հուշի հետ է միտքը սլանում:

Ամենուր են պատերազմի հիշատակները, երկրամասում չկա մի անկյուն, ուր պատերազմն իր սև հետքը թողած չլինի: Երբ առաջին անգամ եղա նախկին Հայկական շրջանի կենտրոն Շահումյան (նախկին Ելիզավետպոլսկոյե) գյուղում, շատ փնտրեցի հին տներ ու կառույցներ: Երկար շրջեցի կանաչի մեջ թաղված, կապույտ ներկված փայտաշեն տներով գյուղում, բայց ոչինչ չգտա: Գյուղը 12 անգամ ձեռքից ձեռք էր անցել և միայն մոխրակույտեր էին մնացել: 1943թ. մարտին, 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի ռազմիկները Հյուսիսային Կովկասից ուղարկված «Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին» նամակում գրում են. «Մենք տեսանք հայերի նկատմամբ գերմանական զավթիչների բարբարոս վերաբերմունքի անհամար նոր փաստեր: Մենք տեսանք գերմանացիների կողմից հրկիզված հայկական Շահումյան գյուղի ավերակները: Ոչ մի տուն ճիվաղները չէին թողել անվնաս: Բոլոր շենքերը հրի էին մատնված...»:

Շահումյանում հուշարձան է կանգնեցվել գյուղի ազատագրության համար զոհված 700 մարտիկների հիշատակին: Գյուղի երկրագիտական թանգարանում հավաքված են նրանց լուսանկարները, փաստաթղթերն ու նամակները, անձնական իրերը: Այնտեղ ցուցադրվում են նաև տարբեր գեներներ ու գնդացիներ, նմանակներ ու ականներ. այդ բոլորը գտնվել են գյուղի տարածքում: Տարիներ առաջ թանգարանում ծանոթացա նախկին պարտիզան Արմենակ Սիմոնյանի հետ: Դրիմցի

էր, եվպատորիայի շրջանի Նոր Կյանք հայկական գյուղից: Պատերազմի տարիներին միացել էր այստեղի պարտիզաններին, իսկ գյուղն ազատագրելուց հետո՝ մնացել: Թանգարանի տնօրեն Յասիբեկ Նալբանդյանն էլ գյուղից էր: Նա ևս մասնակցել էր գյուղի ազատագրական մարտերին, իսկ պատերազմի ավարտից հետո վերադարձել Շահումյան և ընտանիք կազմել: Տասնամյակների ընթացքում թանգարանի հիմնադիր, ուսուցիչ Ա. Խայրյանը, այնուհետև Յ. Նալբանդյանն ու նրանց սաները շատ բան էին հավաքել: Բայց առեւիկայից էլ մնացել էր, որի հավաքումը վեր էր մի գյուղի երկրագիտական թանգարանի ուժերից, իսկ երկրամասի շուրջ 200 հայկական գյուղերն էլ բազմաթիվ զոհեր են տվել և համարյա բոլոր բնակավայրերի ազատագրման համար էլ հայ զինվորներ են զոհվել: Միայն Ապշե-րոնսկի շրջանի փոքրիկ Կուրիսկայա ստանիցայի ազատագրման համար ընկած զինվորների հիշատակին նվիրված հուշարձանին 7 հայրորդու անուն կարդացի՝ Գևորգյան Ռ. Լ., Գրիգորյան Ա. Վ., Մուրադյան Պ. Ա., Հովհաննիսյան Ա. Օ., Օհանյան Ա. Ա., Փուրուջյան Ի. Պ., Մատերոսյան Ս. Ա. (ըստ երևույթի պետք է լինի Մաթևոսյան կամ Մարտիրոսյան):

Իսկ Նովոռոսիյսկում երկարամյա մանկավարժ Վարսենիկ Հայրապետյանն ինձ պատմեց գերմանացիների գործած գազանությունների մասին. «Երբ 1942թ. գերմանացիները գրավում են Նովոռոսիյսկը, սկսում են հավաքել իրեններին: Մատուռային հրեաների հետ ձերբակալվում է նաև հայկական 8-րդ դպրոցի տարեց ուսուցիչ Շահեն Գաբրիելյանը: Աշակերտների ծնողներն ու ուսուցիչ բարեկամները դիմում են քաղաքի պարետին, խնդրելով բաց թողնել:

- Հայերին ձերբակալելու հրաման ես չեմ ստացել, - ասում է պարետը, - մենք նրանց համարում ենք աշխատասեր ու շինարար ժողովուրդ, բայց քաղաքում դեռ շատ իրեններ կան թաքնված, եթե ձեր Գաբրիելյանը երկու իրենայի տեղ ասի, մենք նրան իսկույն բաց կթողնեք:

Կանչում են Գաբրիելյանին, հայտնում պայմանը:

- Ես իմ կյանքը չեմ փրկի մույնիսկ մի երեխայի քիթ արյունելու գնով, - ասում է նա:

Շուտով Գաբրիելյանին իրենների հետ գնդակահարում են»:

Երբ գերմանացիները հեռացան, քաղաքում համարյա քարոք քարի վրա չէր մնացել: Շատ ընտանիքներ ամբողջովին զոհվել էին, բայց զոհերը պատերազմի ավարտի հետ չվերջացան: Յորոմուլյանների ընտանիքի երկու ավագ զավակները զոհվեցին պատերազմում, իսկ 15-ամյա կրտսեր որդին մոր հետ զոհվեց իրենց այգին փոռելիս. չպայթած ականի էին դիպել: Մնաց միայնակ հայրը, այն էլ համարյա ցնորված էր:

Նովոռոսիյսկում է ծնվել խորհրդային Միության հերոս, լեյտենանտ Անդրանիկ Մուրադյանը: Նա 1941-ի հունիսին գորակալվել է բանակ, մասնակցել Կրասնոդարի երկրամասի, ապա Ռոստովի մարզի ու Ուկրաինայի ազատագրմանը: Իսկ Դեկաբրի գետնանցման ժամանակ ցուցաբերած արիության, գետի աջ ափին հենակետ գրավելու համար նա 1943թ. նոյեմբերի 1-ին արժանացավ խորհրդային Միության հերոսի կոչման, բայց ընդամենը 3 օր անց, նոյեմբերի 4-ին քաջ հայրորդին զոհվեց Դեկաբրայեթորովսկի մարզի Միլորադովկա կայարանի համար մղված մարտերում: Նրա կիսանդրին կանգնեցվել է Երևանի Չերժինսկու անվան գործարանի բակում:

Անդրանիկ Մուրադյանի հետ մույն օրը խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ նաև մեկ ուրիշ հայրորդի՝ գվարդիայի լեյտենանտ Ֆեոդոր Սարկիսովը, որը մինչև պատերազմը Կրասնոդարի երկրամասի Նովոկուբանսկի շրջանի Պրոչնոկոպսկայա գյուղի կոլտնտեսության նախագահն էր: 1941-ի սեպտեմբերին նա կազմակերպում է աշ-



Շահումյանի երկրագիտական թանգարանի մուտքի մոտ կանգնած է Յասիբեկ Նալբանդյանը:

խարհագրայինների հեծյալ էսկադրոն, այնուհետև, որպես հրաձգային գունարտակի քաղղել մասնակցում է Մելիտոպոլի ազատագրմանը, և այդ մարտերում ցուցաբերած արիության համար էլ արժանանում է հերոսի կոչման: Ֆեոդոր Սարկիսովը զոհվեց 1944-ի հոկտեմբերին՝ Լիտվայում:

Խորհրդային Միության հերոս, Ավիազոնայի մայր Հակոբ Մաճուկյանը ծնվել է Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում, ավարտել Սևաստոպոլի Ա. Մյասնիկյանի անվան օդաչուական դպրոցը, 1938-ին, 22-ամյա երիտասարդ օդաչուն մասնակցել է Խասան լճի մարտերին, իսկ 1942-ից, որպես էսկադրիլայի հրամանատար՝ Կովկասի պաշտպանությանը, Կուբանի, Ուկրաինայի, Դրիմի, Բելոռուսիայի ազատագրմանը, Բեռլինի գրավման մարտերին: Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացել է 1946թ. մայիսի 15-ին (ի դեպ, նրա ղեկավարած էսկադրիլայի անդամներից հինգը մույնպես արժանացել են հերոսի կոչման): Պատերազմից հետո բնակվել է Երևանում, այնուհետև Խարկովում: Մահացել է 1981-ին:



Այն տունը, որտեղ ապրել է Մարտիրոս Նահուկյանը:

1914-ին Արմավիրում է ծնվել նաև խորհրդային Միության հերոս Վլադիմիր Թամբիևը (Թամբյանը): Հետախուզական դասակի ջոկի հրամանատար, սերժանտ Թամբիևը իր ջոկով 1943-ին Դեկաբրայեթորովսկի շրջանում առաջինը անցավ Դեկաբր և գնդի հրամանատարությանը հայտնեց արժեքավոր տեղեկություններ հակառակորդի կրակակետերի մասին: Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ 1944-ին, մույն թվականին զորացրվելով վերադարձավ հայրենի Արմավիր, որտեղ էլ մահացավ 1981-ին:

Խորհրդային Միության երկու հերոս էլ տվել է Աղբերի շրջանի Ներքին Շիլովկա հայկական գյուղը: Մեծ ու հարուստ գյուղ է Շիլովկան, երկհարկ, քարաշեն տները, լեռնային տեղանքը, լեռն ի վեր ձգվող ոլորապտույտ ճանապարհը հիշեցնում են Հայաստանը: Այ. Մյասնիկյանի փողոցում, թեք սարավանդի ստորոտում հայկական դպրոցի եռահարկ շենքն է: Այս գյուղում են ծնվել խորհրդային Միության հերոս Հարություն Մելեթյանը և խորհրդային Միության հերոս, ավիացիայի լեյտենանտ Մարտիրոս Նահուկյանը, որը Մայկոպի օդաչուական դպրոցն ավարտելուց հետո մասնակցել է Վիտեբս-



Հուշարձան Ներքին Շիլովկա գյուղում:

Կի, Ռիգայի, Վարշավայի, Գդանսկի ազատագրման մարտերին: 25-ամյա Մարտիրոսը զոհվեց հաղթանակից ընդամենը մեկ ամիս առաջ՝ Շչեցինի մոտ: Հերոսի կոչում նրան շնորհվեց հետմահու: Նահուլյանի հիշատակը հավերժացնելու համար նրա անվամբ են կոչված Լեհաստանի Դրևնիցա գյուղի դպրոցն ու Կարագանդայի փողոցներից մեկը: Հայրենի գյուղի փողոցներից մեկը նույնպես կրում է հերոսի անունը:

Ներքին Շիլովկայում սրբորեն են պահում զոհված համազորագրիցների հիշատակը, որոնց նվիրված երկու հուշարձան են կառուցվել. հինը գտնվում է դպրոցի մոտ, իսկ նորը՝ գյուղի բարձրագույն վայրում. բազալտակուռ պատվանդանին զենքն ամուր բռնած զինվորի արձանն է, իսկ հուշապատին հայերեն ու ռուսերեն գրված են 54 համազորագրիցների անունները:



Ներքին Շիլովկա գյուղի համայնապատկերը:

Մոչի-Տուլայի մայրուղու աջ կողմում, բլուր-բլուր ավիա տված, ծովացած լեռների վրա է խարխուս գցել Վերին Լոռ հայկական գյուղը: Ճանապարհի եզրին Մեծ Հայրենականում զոհվածների տուֆակերտ կոթողն է: Գյուղացիները շատ են հպարտանում, որ տուֆը բերել են Հայաստանից:

Վերին Լոռի մշակույթի տանն է գտնվում հայկական թանգարանը, որտեղ առանձին բաժին է նվիրված Մեծ Հայրենականին: Այստեղ ներկայացված են պատերազմում զոհված 75 համազորագրիցների և Կրասնոդարի երկրամասից խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած հայերի լուսանկարները, անձնական իրերը, նամակները: Խորհրդային Միության հերոս Դավիթ Յազիջյանը:



Հուշարձան Թերգյան գյուղում:

ըն ծնվել է 1915-ին հենց ծովագարդ Լոռ գյուղում: 1939-1940թթ. մասնակցել է ֆիննական պատերազմին: 1942-ին ավարտել է տանկային ուսումնարանը, եղել է տանկային վաշտի հրամանատար: Հատկապես աչքի է ընկել Նարևի գետանցման, թշնամու թիկունքում տանկային դեսանտ հանելու ժամանակ: Կրտսեր լեյտենանտ Դավիթ Յազիջյանը հերոսի կոչման է արժանացել 1945թ.՝ Լեհաստանի ազատագրման համար մղված մարտերում ցուցաբերած անօրինակ քաջության համար: Պատերազմից հետո նա բնակվում էր Սոչիում, ուր և մահացավ 1988-ին:

Իր նախնիների հիմնած Մելկանով (մտնում էր Հայկական ազգային շրջանի կազմի մեջ) գյուղում է ծնվել Անդրանիկ Մելքոնյանը: 1937-ին զորակոչվել է բանակ, մասնակցել ֆիննական պատերազմին: Մեծ Հայրենականի տարիներին սակրավորների ջոկի հրամանատար Անդրանիկ Մելքոնյանը կռվել է Կովկասի, Ստալինգրադի պաշտպանությունում, Ուկրաինայում: 1944-ի ապրիլին Դնեստրի գետանցման ժամանակ ցուցաբերած արիության համար գվարդիայի ավագ Անդրանիկ Մելքոնյանը արժանացել է խորհրդային Միության հերոսի կոչման: Պատերազմից հետո բնակվում էր Տուլայի շրջանի Նովոմիխայլովսկի գյուղում:

Համշենահայ մյուս հերոսը՝ Հմայակ Մնուպյանը, Աֆանասևսկի Պոստիկ (Շահումյանի գյուղխորհրդի կազմում մտնում էր Հայկական ազգային շրջանի մեջ) գյուղից էր: Պատերազմի նախօրեին Բելո-

րեչենսկի շրջանի Սադուցկի գյուղի կուլտուտեստայան նախագահն էր: Մասնակցել է Բելոռուսիայի, Լիտվայի և Պոլսիայի ազատագրմանը: Նեմանի գետանցման կռիվներում ցուցաբերած անձնագոհության համար նա 1945թ. արժանացել է հերոսի կոչման: Պատերազմից հետո Մնուպյանը ապրում էր Կրասնոդարի երկրամասի Գորյաչի Կլուչ քաղաքում, ուր և մահացավ 1985-ին՝ 78 տարեկան հասակում:

Միհրան Շալջյանը ծնվել է 1925-ին Կրասնոդարի երկրամասի Գորյաչի Կլուչի շրջանի Բեզիմյանայա ստանիցայում: Ավարտելով հրաձգային դպրոցը, նա 1944-ի սեպտեմբերից մասնակցել է մարտերին: Գվարդիայի սերժանտ Միհրան Շալջյանը հերոսի կոչման է արժանացել 1945-ին՝ Շարեի գետանցման և Լուբենովալո քաղաքի մոտ մղված կռիվներում ցուցաբերած արիության համար:

Երբ թե՛ մարտեր էին մղվում Կրասնոդարի երկրամասում, զերմանական ռմբակոծիչները 1942թ. օգոստոսին և սեպտեմբերին Աբխազիայի վրայով 29 թռիչք են կատարել, ռմբակոծել Սուխում քաղաքը: Արյունահեղ մարտեր էին մղվում Կովկասի լանջերին: Հարավում թուրքական դիվիզիաները մոտեցել էին Հայաստանի սահմանին: Իսկ թուրքական հալածանքների հիշողությունները դեռ թարմ էին: Դրանք չէին մոռացվել նաև Երվանդ Գարանյանի ընտանիքում, որը Տրապիզոնի կուսակալության Սամսոնի գավառի Կուրշումլի գյուղից 1902-ին եկել, հաստատվել



Անդրանիկ Մուրադյան



Երվանդ Գարանյան



Մարտիրոս Նախույան

եր Գագրայի խրիստոֆորով (Բաղնարի) գյուղում, որտեղ էլ 1903-ին ծնվեց Երվանդը: Երբ սկսվեց Մեծ Հայրենականը, Երվանդը Աբխազիայի Գագրայի շրջանի մյուս հայրիկների հետ զենք վերցրեց: Նա կռվեց Ստալինգրադում, Կենտրոնական, Արևմտյան, Առաջին Բելոռուսական ռազմաճակատներում: Հրետանավոր Երվանդ Գարանյանը խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ 1944-ին՝ Չեռնիգովի ազատագրման և Դնեպրի գետանցման ժամանակ ցուցաբերած անօրինակ խիզախության համար: Պատերազմից հետո՝ 1945-48թթ. Գարանյանը խրիստոֆորովի գյուղխորհրդի նախագահն էր, 1948-51թթ. Նակադուլի գյուղի կուլտուտեստայան նախագահը, այնուհետև նա երկար տարիներ բնակվում էր Ադլերի շրջանի Վեսյոլոյե գյուղում: Մահացել է 1995-ին:



Հարություն Չարյան



Անդրանիկ Մելքոնյան



Միհրան Բոստանյան



Հարություն Մելեքյան

Ինչպես արդեն մշել ենք, Հարություն Մելեքյանը ծնվել է Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Ներքին Շիլովկա գյուղում: 1931-ին Մելեքյանների ընտանիքը տեղափոխվել է Գագրայի շրջանի խուլդնայա Բեչկա գյուղ: 1945-ին նա ընդամենը 20 տարեկան էր, երբ Օդերի գետանցման ժամանակ, նրա ծախ ափին հեռակետ գրավելու համար արժանացավ խորհրդային Միության հերոսի կոչման: Կրտսեր լեյտենանտ Հարություն Մելեքյանն իր հրաձգային դասակով մասնակցել է նաև Արևմտյան Ուկրաինայի ու Լեհաստանի ազատագրմանը, ֆաշիստական Գերմանիայի ջախջախմանը: Պատերազմից հետո նա երկար տարիներ բնակվում էր Սոչիում: Նա մահացավ 1997-ին:



Հմայակ Մնուպյան



Հակոբ Մամուկյան

Լեյտենանտ Միհրան Բոստանյանը ծնվել է Սուխումի շրջանի Վերին Էշերա գյուղում 1913-ին: Մեծ Հայրենականի տարիներին մասնակցել է Ստալինգրադի ճակատամարտին, Ուկրաինայի, Հունգարիայի, Ավստրիայի ազատագրմանը: Խորհրդային Միության հերոսի կոչման է արժանացել 1944-ին Դնեպրի գետանցման մարտերում ցուցաբերած քաջության համար: Բոստանյանը 1958թ. մահացավ Գագրայում և այն փողոցը, որտեղ ապրել էր հերոսը, կոչվեց նրա անունով:



Դավիթ Յազիջյան



Վաղարշի Թամրիկ

Աբխազիայից հագարավոր հայրիկներ էին մեկնել ռազմաճակատ և նրանցից շատերը չտեսան հաղթանակի հրավառությունը: Կապիտան Հարություն Չարյանը 26 տարեկան էր, երբ 1944-ին զոհվեց Սևաստոպոլի մատույցներում, իսկ մինչ այդ նա քաջաբար կռվել էր Կովկասյան, Հարավային Ուկրաինական ռազմաճակատներում: Սապուն լեռան գրոհի և



Միհրան Շալջյան



Ֆնորդ Սարկիսով

Սևաստոպոլի ազատագրման մարտերում ցուցաբերած սխրանքի համար 1945-ին հետմահու արժանացավ խորհրդային Միության հերոսի կոչման: Հարություն Չարյանի անունն է շնորհվել նրա ծննդավայր Գումիստայի հայկական դպրոցին:

Արևազգայում ապրող մեր հայրենակիցները նաև հերոս ծովայիններ էին: Նավապետ Աշոտ Կլորիկյանը ծնվել է Օրդուում, Մեծ Եղեռնի արյունոտ ալիքը նրանց ընտանիքը և նետել է Արևազգայի ափերը: Սուխումի հայկական դպրոցն ավարտելուց հետո Կլորիկյանը սովորել է Խերսոնեսի ծովագնացության ուսումնարանում: Հեռավոր նավարկության կապիտան Կլորիկյանի նավը շատ ծովեր ու օվկիանոսներ է ակոսել, իսկ 1936թ. զենք ու զինամթերք հասցրել Իսպանիայի հանրապետականներին: Հայրենական պատերազմի փոթորկահույզ տարիներին Կլորիկյանի ղեկավարած նավը բազմաթիվ

հույժ կարևոր հանձնարարություններ է կատարել, իսկ ԱՄՆ-ի ափերը լողալիս նրանավը ռմբակոծել են գերմանական ինքնաթիռները և նավի անձնակազմը երեք օր ու գիշեր սովից ու ցրտից տառապելով փոքրիկ նավակներով դեգերել է բաց օվկիանոսում, մինչև որ օգնության են հասել: Այնուհետև Աշոտ Կլորիկյանը նշանակվել է «Պրեբրա» ջերմանավի նավապետ, իսկ կյանքի վերջին տարիներին նա Օդեսայի նավահանգստի պետն էր:

Մեր հայրենակիցները թշնամու թիկունքում ևս հերոսական պայքար են մղել. Վահրամ Կալաջյանը 1942թ. հուլիսից Վիտեբսկի շրջանի Ֆրոնդեի անվան պարտիզանական խմբի ղեկավարն էր: Նրա

երկուհազարանոց պարտիզանական խումբը ընդամենը մեկ տարվա ընթացքում պայթեցրել ու շարքից հանել է թշնամու 32 էշեր, ավելի քան 20 կամուրջ, 80 կմ երկաթուղագիծ...
Իսկ Գրիգոր Մինասյանին շատ պարտիզաններ գիտեին «Բրոնիկ» կեղծանունով: Ավարտելով Մոսկվայի ռազմաճարտարագիտական ուսումնարանը, նա պատերազմի առաջին իսկ օրերից մարտնչել է Մոլդավիայում: Նա իր պարտիզանների խմբով բազմաթիվ խիզախ հարձակումներ է գործել թշնամու վրա, պարտիզաններին սովորեցրել պայթուցիկ նյութեր պատրաստել և հոդս ցնդեցնել զենքով ու մթերքով բեռնված թշնամու տասնյակ էշեր

լոնները: 1943թ. Գրիգոր Մինասյանը նշանակվել է Ուկրաինայի պարտիզանական խոշոր խմբերից մեկի շտաբի պետ:
Արևմտյան Ուկրաինայում ընդհատակյա կազմակերպություններ էին ղեկավարում Իսրայել Մինասյանն ու Գևորգ Քյուլյանը: Իսկ սուխումցի բանաստեղծ Արշավիր Ջիդարյանը, որը պատերազմի տարիներին մայր էր դիվիզիայի շտաբի կոմիսար, կռվում էր ոչ միայն զենքով, այլև գրչով:
Այդ, ամեն մարդ իր ճակատագիրն ունի, սակայն լինում են պահեր, երբ անհատի ճակատագիրը նույնանում է երկրի ու ժողովրդի ճակատագրին: Եվ փորձության ժամանակ է, որ ժողովուրդը ցույց է տալիս, թե ինչի է ունակ:

(սկզբը 2005թ. NN 1-2-ում)

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հայրենական պատերազմի սկսվելուց հետո Արակիչից ռազմաճակատ մեկնեց 167 հոգի, որից 84 հոգի զոհվեց, իսկ Դաչայից, որը մտնում է Արակիչի կազմի մեջ, մեկնեց 40 հոգի, չվերադարձավ 19 հոգի: Պատերազմի ընթացքում Արակիչը տվել է 27, իսկ Դաչան՝ 13 սպա:
Պատերազմի դժվարին տարիներին

նրանց շնորհիվ է, որ Արակիչում 1980թ. հեռախոսագիծ անցկացվեց:
Արդեն Արակիչում հաշվվում էր 500 տնից ավելի, 267 սեփական մեքենա, 50-ից ավելի տրակտոր, երբ հանկարծ 1992թ. օգոստոսի 14-ին սկսվեց վրացաբխազական պատերազմը:

ՎՐԱՑ-ԱՐԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1992թ. օգոստոսի 14-ը կմնա Արխազիայի ժողովրդի հիշողության մեջ որպես պատերազմի առաջին օր: Երկրորդ օրը սկսեցին թալանը: Արակիչ գյուղը թալա-

ային, Սամվելին այնքան են ծեծում իր հոր աչքի առաջ, հայրը չի դիմանում, ասում է դահիճներին. «Դուք նեմեցներից էլ վատն եք, դահիճներ եք»: Մեկը ավտոմատի մի հարվածով սպանում է Հայրենական պատերազմի մասնակից թոշակառու Արշավիր Թովմյանին:
31 դեկտեմբերի 1992թ.
Մի քանի բանդիտներ եկան Քերիմով Սեյրանի տունը թալանելու, հարևանները հավաքվեցին, որպեսզի վնդեն բանդիտներին, չթողնեն կողոպտելու: Ավագակներից մեկը հանում է նետում է նուրբ ժողովրդի կողմը, դեռ չպայթած Մինասյան Հարությունը մի ակնթարթում վերցնում է նուրբը ու օգնում է ուրիշ կողմ, փրկելով ժողովրդին իսկական մահից: Այդ ժամանակ նույն բանդիտը ավտոմատով կրակում է ժողովրդի վրա և վիրավորում յոթ հոգու, որից մեկը դարձավ հաշմանդան:
13 հունվարի 1993թ.
Երեք հոգով մտնում են Մինասյան Արսենի տունը, թալանում են: Նրան այնքան են ծեծում, որ էլ չի կարողանում շարժվել ու թողնում զնուն են: Ես մյուս օրը գնացի տուն ու տեսա եղբորս, չճանաչեցի, ահա թե ինչ արեցին Հայրենական պատերազմի հաշմանդանին:
4 մարտի 1993թ.
Սկսեցին գողանալ մարդկանց, մեքենայով մտան գյուղ և բռնեցին Գևորգյան Վալիկոյին, Թովմյանյան Ռաֆիկին, Էքսուզյան Տոլիկին, Մինասյան Սերգեյին, Մինասյան Ասատուրին, Կրաչյան Վլադիմիրին և Հովհաննեսին և տարան Ցագերի, այնքան ծեծեցին, չարչարեցին, որ ստիպված էին խոստանալ տալ իրենց տներն ու ունեցվածքը: Նրանց բաց թողեցին, բացի Էքսուզյան Տոլիկից, որը ոչինչ չխոստացավ: Ծեծ, ամեն ձևի խայտառակություն, երրորդ օրը թողեցին: Նա Ցագերից Արակիչ հասավ երրորդ օրը, ոտով ու ժապավեն:



Մի խումբ արակիչցիներ երևանում, աչից երկրորդը հողվածի հեղինակ Ա. Մինասյանն է:

ԱՐԱԿԻՉ

գյուղում մնացած կանայք, ծերերն ու երեխաները աշխատում էին օր ու գիշեր: Տրակտորների վրա աշխատանքի անցան կանայք՝ Բույուքյան Հայկանուշը և Մինասյան Յուզաբերը:



Սոցիալիստական աշխատանքի հերոս Ղևոնդ Կրաչյանը:

Պատերազմի ավարտից հետո վերադարձավ և Կրաչյան Ղևոնդը, որին վերընտրեցին կոլտնտեսության նախագահ: Կոլտնտեսությունը ձեռք բերեց մի քանի տրակտոր և ավտոմեքենա, կոլտնտեսականներն էլ տասնյակ մեքենաներ գնեցին. առաջինը գնեց Այվազյան Երվանդը:
Այն եկեղեցին, որ օգտագործվում էր որպես ակումբ, վերանորոգեցին և տեղի նկարիչ Մինասյան Արշավիրը, որն ակումբի վարիչն էր, պատերին նկարեց Սասունցի Դավթին և Էպոսից այլ նկարներ, բայց ամօն պաշտամունքի, թե ինչի պատճառով, եկավ հանձնաժողով, տեսնելով դրանք, ասաց. «Դուք ի՞նչ է, ակումբը դարձրել եք եկեղեցի», ամմիջապես մաքրեցեք և զեկուցեք մեզ»: Եվ այդ 12 նկարները մաքրել տվեցին նույն նկարչին: Այդ նկարները տեսել են Վահրամ Փափազյանը, Դորի Ամիրբեկյանը, Հովհաննես Շիրազը, Սիվա Կապուտիկյանը, Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից եկած քանի-քանի երգի-պարի ու թատերական խմբեր:

մեցին հարևան ախալքապցիներն ու կինոդցիները և ուրիշ տեղից եկած գողերը: Այդ երկու գյուղերը մեր հարևաններն էին, նախկինում թշնամություն չի եղել, բայց առիթից օգտվելով կողոպտում էին ու ցույց տվեցին իրենց ուժ լինելը:
267-ից չթողեցին ոչ մի մեքենա, տարան անասուններ, հավեր, կահույք, բացի այդ՝ ծեծ, բռնաբարություններ: Գյուղի ղեկավար Չաքրյան Վլադիմիրը դիմեց զենքերալ Կարկարաշվիլուն, երբ արդեն աղջիկներ էին ուզում շտաբում «աշխատելու» համար, զենքերալն ասաց. «Եթե թո ասածները ճիշտ չլինեն տրիբունալի առաջ պատասխան կտաս, մեզ հայտնի է, որ դու երիտասարդներին ուղարկում ես Ռուսաստան, որպեսզի հայրերը չկռվեն արխազների դեմ»: Իսկ գողերի, ավագակների առաջին բառերն էին. «Դուք արխազների դեմ չեք կռվում, դրա համար էլ թալանում ենք»:
Բերեն մի քանի օրինակներ, թե ինչպես էին վարվում խաղաղ ժողովրդի հետ:
26 դեկտեմբերի 1992թ.
Մի քանի գողեր մտան Ջեթոնյան Աստղիկի տունը՝ թալանելու. այդ բանդայի ղեկավարն էր մի կին, որն իրեն արխազուհու տեղ էր դնում: Թալանելուց հետո տեսնում է, որ Աստղիկի ատամները ոսկուց են, բերել է տալիս մի աքցան և Աստղիկին ստիպում է, որ ատամները պոկի ինքն իր ձեռքով: Պոկում ու տալիս է այդ կնոջը, որն ասում է. «Դու ինձ միլիոնների չէ՞, հետո չասես թե գոռով առան»:
27 դեկտեմբերի 1992թ.
Մտան Կրաչյան Վլադիմիրի տունը, թալանից հետո ուզում են մեքենան, որը արդեն ավագակները տարել էին մի քանի օր առաջ, ասում են, թե դու թաքցրել ես, չես ուզում մեզ տալ, դու արխազների կողմից ես, սկսեցին կնոջ ներկայությամբ ծեծել այնքան, որ նրա ձայնը լսվում էր սուրից շատ հեռու, մյուս օրը նա անձամաշել էր:

28 դեկտեմբերի 1992թ.
Աթարյան իր տան մեջ բռնեցին Կվիցիմիա Ալյոշային, այնքան ծեծեցին, որ ասի, թե ով ռացիա ունի Արակիչում, նա ստիպված է լինում ասելու մեկի անունը, որպեսզի ազատվի, ասում է Թովմյան Սամվելի անունը, բերում են Սամվելի մոտ արյունաշաղախ, քթի կեղև կտրված Ալյոշային, Սամվելին այնքան են ծեծում իր հոր աչքի առաջ, հայրը չի դիմանում, ասում է դահիճներին. «Դուք նեմեցներից էլ վատն եք, դահիճներ եք»: Մեկը ավտոմատի մի հարվածով սպանում է Հայրենական պատերազմի մասնակից թոշակառու Արշավիր Թովմյանին:
31 դեկտեմբերի 1992թ.
Մի քանի բանդիտներ եկան Քերիմով Սեյրանի տունը թալանելու, հարևանները հավաքվեցին, որպեսզի վնդեն բանդիտներին, չթողնեն կողոպտելու: Ավագակներից մեկը հանում է նետում է նուրբ ժողովրդի կողմը, դեռ չպայթած Մինասյան Հարությունը մի ակնթարթում վերցնում է նուրբը ու օգնում է ուրիշ կողմ, փրկելով ժողովրդին իսկական մահից: Այդ ժամանակ նույն բանդիտը ավտոմատով կրակում է ժողովրդի վրա և վիրավորում յոթ հոգու, որից մեկը դարձավ հաշմանդան:
13 հունվարի 1993թ.
Երեք հոգով մտնում են Մինասյան Արսենի տունը, թալանում են: Նրան այնքան են ծեծում, որ էլ չի կարողանում շարժվել ու թողնում զնուն են: Ես մյուս օրը գնացի տուն ու տեսա եղբորս, չճանաչեցի, ահա թե ինչ արեցին Հայրենական պատերազմի հաշմանդանին:
4 մարտի 1993թ.
Սկսեցին գողանալ մարդկանց, մեքենայով մտան գյուղ և բռնեցին Գևորգյան Վալիկոյին, Թովմյանյան Ռաֆիկին, Էքսուզյան Տոլիկին, Մինասյան Սերգեյին, Մինասյան Ասատուրին, Կրաչյան Վլադիմիրին և Հովհաննեսին և տարան Ցագերի, այնքան ծեծեցին, չարչարեցին, որ ստիպված էին խոստանալ տալ իրենց տներն ու ունեցվածքը: Նրանց բաց թողեցին, բացի Էքսուզյան Տոլիկից, որը ոչինչ չխոստացավ: Ծեծ, ամեն ձևի խայտառակություն, երրորդ օրը թողեցին: Նա Ցագերից Արակիչ հասավ երրորդ օրը, ոտով ու ժապավեն:

րայի ճակատ, երեք ամիս կռվելուց հետո մեզ բերեցին Արակիչ, որպեսզի մենք կռվենք Աթարայի ճակատում»:
Այդ գիշեր գիշերեցին մեր տանը, մենք չկարողացանք քնել, որովհետև ամեն ինչ կարող էր պատահել մեզ հետ, բայց դրանք նրանցից չէին: Առավոտը վեր կացան, զնալու ժամանակ ասացին. «Թույլ կտա՞ք նորից ձեր տանը գիշերենք»: Ես համաձայնություն տվեցի, որպեսզի ուրիշները չկարողանան մտնել:
Նույն օրը նրանց Արակիչից հանեցին տարան ուրիշ տեղ:
Ժամանակավոր հաշտություն կնքելուց հետո հանկարծ 1993թ. սեպտեմբերի 16-ին արխազական բանակը հարձակում գործեց թշնամու վրա, Արակիչի կողմից սկսեց հարձակվել Աթարայի ճակատում գործող բանակը, հարձակվելով Ախալքաբայի վրա ու մի քանի օրում ազատեցին Արակիչը, Ախալքաբան, Դաչան, Սկուրչը, Կինդոյին, Թամիշը և շարունակելով գրոհը հասնելով Ինզուրի գետի սամանը, ազատագրեցին Արխազիան:
1993թ. սեպտեմբերի 30-ին վերջացավ արխազական պատերազմը:

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Վրաց-արխազական պատերազմը վերջացավ, բայց նոր բանդիտներ դուրս եկան, նոր ձևի թալանչիներ: Նրանք անգիր գիտեին, որ Արակիչում մեքենա չկա, տրակտոր չկա, ոսկի մատանի չկա, գիտեին, որ մանդարին, վարունգ, պոմիդոր կլինի, բոլոր տների վրա նշանակեցին տուրք, ասացին թե՛ դուք չեք կռվել վրացիների դեմ, մենք հիմա պաշտպանում ենք ձեզ, որպեսզի ուրիշները չթալանեն: Ահա նոր կրակ: Նույն բանն ասում էին վրացիները, որ դուք չեք կռվում արխազների դեմ, իհարկե պիտի թալանենք: Նրանք ճիշտ էին, արխազների դեմ ոչ մի արակիչցի չկռվեց, բայց երբ արխազների բանդիտներն էին ասում այդ բառը, շատ ցավալի էր, երբ յոթ հոգի Արակիչից մարտնչում էր վրացիների դեմ, երբ մարտնչում էր Բարաձայանի անվան հայկական գումարտակը, երբ հայերից քսան հոգի եղան Արխազիայի հերոս, երբ 200-ից ավելի զոհվեցին, ուրեմն մենք չէինք մասնակցել, ահա այդ էր մեզ տանջում, ինչո՞ւ համար, մեկը չկար, որ ասեր, հեռի՞ք է, Լռե՞ք:



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-րդ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻ- ՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ապրիլի 20-21-ին Երևանում տեղի ունեցավ «Ծանրագույն հանցանք. ծայրագույն մարտահրավեր» խորագրով միջազգային համաժողով, որը հրավիրել էին Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովը և ՀՀ արտաքին գործերի նախարարությունը: Համաժողովին մասնակցում էին շուրջ քսան երկրների 50 գիտնականներ, ինչպես նաև քաղաքական, հասարակական գործիչներ, լրագրողներ:

Համաժողովի նպատակն էր հասկանալ ցեղասպանության բնույթը, ուսումնասիրել դրա ակունքները, գտնել բանաձևեր այն կանխելու և հակազդելու համար:

Համաժողովի աշխատանքին մասնակցում էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, բարձրաստիճան այլ անձինք:

Համաժողովում ելույթներ ունեցան Ցեղասպանությունների կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդական Խուան Սենդեգը, Մարդու իրավունքների հոլանդական կենտրոնի տնօրեն Վիլյամ Շաբասը, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի նախկին քարտուղար, իրավունքի պրոֆեսոր Ալֆրեդ Դե Ջայասը, Հոլլանդիայի նախագահ Կոնստանտին Միտրոպոլիտոսը, ինչպես նաև Հայաստանի հանձնաժողովի գիտական խորհրդակցական Եհուդա Բաուերը, Աժ ԳՅԴ խմբակցության ղեկավար, պատմաբան Լևոն Մկրտչյանը, ՀՀԳ Բյուրոյի Հայ դատի և քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը, Ստամբուլի «Ակոս» շաբաթաթերթի խմբագիր Հրանտ Տինքը, Հիլկազոյի համալսարանի պրոֆեսոր Ռոնալդ Սյունին, Իտալիայի Սինեմայի համալսարանի պատմության պրոֆեսոր Մարչելո Ֆլորենց, Ճապոնիայի Աիչի Սանգոյո համալսարանի իրավունքի պրոֆեսոր Հեյդի Սեզավան, ԱՄՆ-ի «Ջորջամ» հիմնարկի տնօրենների խորհրդի նախագահ Ռոջեր Սմիթը, ԱՄՆ-ի Հարավային Կարոլինայի համալսարանի պրոֆեսոր Դոնալդ Միլլերը, Երուսաղեմի Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն, Ցեղասպանության հանրագիտարանի գլխավոր խմբագիր Իսրայել Չարնին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովհաննիսյանը, Իսրայելի Կենսետի անդամ, Ռաբինի և Բարաքի կառավարություններում կրթության և բնապահպանության նախարար Յոսի Սարիդը, Մերի Վաշինգտոնի քոլեջի մարդու իրավունքների պրոֆեսոր, Ցեղասպանությունների նախագուշակացման կենտրոնի նախագահ Գրեգորի Սթանբոնը, Իսրայելի Բաց համալսարանի և կրթական Կիբուցիմ քոլեջի աշխատակից Յասիր Աուրոնը, Միջազգային ուսումնասիրությունների դանիական ինստիտուտի Հոլլանդիայի և ցեղասպանությունների ուսումնասիրության բաժանմունքի ավագ գիտաշխատող Էրիկ Մարկուսենը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, նորվեգացի գրող Յուսի Ֆլեմինգ Բյորնը, Լեհաստանի նախկին նախագահ, Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Լեխ Վալենսան, ԱՄՆ-ի Մինեսոտա-Թուրնի Միքիի համալսարանի պատմության բաժանմունքի պրոֆեսոր Թամեր Աքչանը, Ստամբուլի Բիլի համալսարանի հանձնաժողովի գրականության պրոֆեսոր Սուրատ Բելգեն, Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Ռիչարդ Հովհաննիսյանը, ԱՄՆ-ի «Ջորջամ» հիմնարկի ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի տնօրեն Վահագն Տատրյանը, Բեռլինի Ազատ համալսարանի պրոֆեսոր Թեսաս Հոֆմանը և ուրիշներ:



յություն չունեն: Չկար նաև այդ հասկացության բնորոշումը: Չկային միջազգային կառույցներ, որ կարող էին քննարկումների հարթակ դառնալ՝ ցեղասպանության հանցագործությանը համատեղ հակահարված հասցնելու համար:

Իհարկե, աշխարհը փոխվում է: Ժամանակ պահանջվեց, որպեսզի մարդկությունը դասի ցեղասպանությունը մարդկության դեմ հանցագործությունների շարքին՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Ժամանակ պահանջվեց, որպեսզի տեղությունների աշխարհաքաղաքական շահերին չզոհարեվեն հիմնարար մարդասիրական արժեքները: Որ բարոյականությունը դառնա քաղաքակրթության աշխարհի արտաքին քաղաքականության բաղադրիչ: Այս ճշմարտությանը տանող ճանապարհը ողբերգական էր բազմաթիվ ժողովուրդների համար: Հայերի համար այդ ճանապարհի գինը մեկ և կես միլիոն մարդկանց կյանքն էր:

...Օգտվելով առիթից՝ իմ շնորհակալությունն են հայտնում բոլոր այն երկրներին, որոնք ամենատարբեր մակարդակներով անդրադարձել և ճանաչել են հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև այն բոլոր կազմակերպություններին և անհատներին, որոնք իրենց լուսն են բերել ճանաչման գործընթացին: Սփյուռքի դերն այստեղ ուղղակի անգնահատելի է: Այդ ճանաչումը նաև ցեղասպանության երևույթի մերժում է նշանակում: Հայոց եղեռնի գոհեթիվը անհամեմատ մեծ կլիներ, իսկ վերապրածների ճակատագիրը՝ շատ ավելի դաժան, եթե այդ ծանր շրջանում մեր ժողովրդի կողքին չկանգնեին Սորոսթևանը, Բրյուսը, Նանսենը, Ֆրանսը, Վերֆելը, Բրյուսովը, Վեգները, Լեֆսիուսը և շատ ուրիշներ:

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք, Հայաստանի Հանրապետությունը, որպես անկախ պետություն, հստակ արտահայտել է իր դիրքորոշումը. ճանաչումը կարևոր է նաև հետագայում ցեղասպանության հանցագործությունները կանխելու համար: Գնա՜նք կարևոր է հայ-թուրքական հարբերությունների համար, քանի որ կտա մեր երկու ժողովուրդների միջև առկա բազմաթիվ հարցերի պատասխաններ և հնարավորություն կընձեռնի մայել դեպի ապագա»:



Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդն իր խոսքում ասաց. «Քաղաքակրթության առաջընթացի, լուսավորության դարում մեր ժողովուրդը հույս ուներ գտնել անձի ապահովություն, մարդկային իրավունքի պաշտպանություն և խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի

պայմաններ, բայց բնաջնջվեց թուրքիայի տարածքում գտնվող իր պատմական հայրենիքի մեծագույն հատվածի վրա և թուրքական կայսրության հայաշատ բնակավայրերում: Կազմակերպված կոտորածներն ու տարագրությունը վերածվեցին մահվան նախճիրի. ինչը չէր հասցնում սուրը, ավարտում էին սովն ու համաճարակները: Փաստական վկայությունների պակաս չեն զգում այս իրադարձությունների ուսումնասիրությունները: Այսօր մի շարք պետությունների կողմից հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը՝ իբրև մարդկության դեմ գործված մեծագույն ոճիր, վստահություն է ներշնչում մեզ, որ այն պիտի գտնի համընդհանուր ճանաչում ու արդար գնահատական»:

Համաժողովի երկրորդ օրը, ապրիլի 21-ին, միջազգային գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ, Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Սարգսյանը: Նա մասնավորապես ասաց. «Չետևողականորեն ձգտելով հասնել հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը՝ մենք հետամուտ ենք ոչ միայն մեր ժողովրդի ուղեկցող իրավունքների, արժանապատվության և արդարության վերականգնմանը, այլև դրանով մեր իրական ավանդն ենք ներդրում հանցագործության դեմ քաղաքակրթ աշխարհի կողմից մղվող պայքարում՝ նպաստելով միջազգային իրավունքի և բարոյականության համընդհանուր կենսակերպի



հաստատմանը: ...Մեզ երբեմն առաջարկում են մոռանալ անցյալը և ընթանալ առաջ, մենք էլ ասում ենք՝ ո՛րն է հետ. եղեռնագործի», սեփական քաղաքացիների նկատմամբ ոճիր գործած պետության իրավահաջորդի՞, թե՞ պատմական իրողությունը միտումնավոր մոռացության մատուցողների հետ»:

Լեռնային Ղարաբաղի հանրապետության նախագահ Արկադի Դուկասյանն իր ելույթում նշեց, որ թուրքիայի կողմից Հայաստան տանող տրանսպորտային հաղորդակցությունների շրջափակումը ցեղասպանության իրագործման անպատժելիություն է հետևանք է: Ըստ նրա՝ նույն այդ հանգամանքով է թելադրված Ադրբեջանի ղեկավարության ձգտումը՝ թուրքիային հատուկ դեր տրամադրել Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման գործում:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատմությանը, նա ասաց, որ Ադրբեջանի իշխանությունները ձգտել են փոխել մարզի ժողովրդագրական իրավիճակը հոգուտ ադրբեջանական բնակչության՝ նպատակ ունենալով հետագայում լուծարել հայկական ինքնավարությունը: Այս նպատակին հասնելու համար Ադրբեջանի ղեկավարությունը «գործի էր դրել այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են հայ բնակչության նկատմամբ աղաղակող խտրականությունը սոցիալական, տնտեսական, մշակութային ոլորտներում, հայ ժողովրդի պատմության խեղաթյուրումը, Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի ցամաքացած տնտեսական ու մշակութային կապերի արգելումը»: Նախագահը նշեց, որ նույնպիսի քաղաքականություն են վարել Ադրբեջանի ղեկավարները Նախիջևանի ինքնավար հանրապետության երբեմնի հայկական մեծամասնության, Սուգայիթ, Բաքու, Կիրովաբադ քաղաքների և Ադրբե-

ջանի մյուս շրջանների հայ բնակչության՝ ըստ ազգային հատկանիշի ոչնչացումը և մշտական բնակության վայրերից բռնի տեղահանումը որակելով որպես ցեղասպանություն և այն համարելով թուրքական քաղաքականության տրամաբանական շարունակություն:

Համաժողովում եզրափակող իր ելույթում արտագործնախարար Վար-



դան Օսկանյանը մասնավորապես ասաց. «Ինչո՞ւ է թուրքերին զարմացնում, որ Արարատը մեր գինաճանի վրա է: Մենք այս տարածքում բնակվել ենք մի քանի հազար տարի: Այդ ընթացքում մեր սահմաններ փոխվել են բազմիցս: Կար ժամանակ, երբ մենք ունեինք ծովից ծով Հայաստան, և սա պատմական փաստ է: Պատմական փաստ է նաև այն, որ մեր սահմանների վերջին փոփոխությունը տեղի ունեցավ անցյալ դարի վերջին: Փաստ է նաև այն, որ Սևրի պայմանագիրը, որ ստորագրվել է նաև թուրքիայի կառավարության կողմից, մեզ տարածք էր տրամադրում, որը ներկայիս տարածքի տասնապատիկն էր: Պատմական փաստ է, որ թուրքիան մերժեց միջազգային համաձայնության կամքը, չնայած ստորագրեց Սևրի պայմանագիրը և ստեղծեց այնպիսի իրավիճակ, որն ի վերջո հանգեցրեց Լոզանի համաձայնագրին, որով պայմանավորվում են այսօրվա սահմանները: Քաղաքական իրողություն է նաև այն, որ թուրքիան և Հայաստանը միջազգային հանրության առջև հանդես են գալիս իրենց այսօրվա սահմաններով: Աշխարհը մեզ այսպես է ճանաչում: Քաղաքական իրողություն է նաև այն, որ փոքր Հայաստանը չի կարող սպառնալ թուրքիայի անվտանգությանը:

Երեկ ես հարցազրույց ունեցա թուրքիայի հեռուստատեսությամբ: Ինձ զարմացրեց անիրազեկությունը անգամ լրագրողների շրջանում՝ կապված հայ-թուրքական հարաբերությունների հետ: Հարցազրույց վարող զարմացավ, որ հայկական կողմից սահմանը բաց է, փակ է միայն թուրքիայի կողմից: Նրան զարմացրեց նաև այն, որ Հայաստանը նախապայմաններ չի առաջադրում թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու առումով: Նա ասեց, որ անգամ ցեղասպանության ճանաչումը նախապայման չէ: ...Մենք պատրաստ ենք թուրքիայի հետ երկխոսությանը, մենք հարևաններ ենք և շարունակելու ենք ապրել կողք-կողքի, բայց մենք կուզենայինք նորմալ հարաբերություններ ունենալ նրանց հետ, որպեսզի բանակցենք կառավարական մակարդակով, կուզենայինք բաց սահմաններ ունենալ, առևտուր անել, մայրաքաղաքներում ներկայացուցիչներ ունենալ:

...Թուրքիայում փոփոխություններ պետք է տեղի ունենան հենց երկրի ներսից: Ես համաձայն եմ այս կարծիքի հետ: Սակայն փոփոխությունը չպետք է կորզվի արտաքին ճնշմամբ: Նաև թյուրքական կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ թե Հայաստանը դեմ է թուրքիայի անդամակցությանը եվրամիությանը: Միայն է դա: Լավագույն բանը, որ կարող է Հայաստանի հետ տեղի ունենալ, եվրոպական թուրքիա ունենալն է, որպեսզի թուրքիան հետևի եվրոպական չափանիշներին, թուրքիան, որ նման է Բելգիային»:

Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված համաժողովի շրջանակում տեղի ունեցան բազմաթիվ այլ միջոցառումներ և:

ՀՈՎՏԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ ԵՐԿՐՈՂ.

«ԵՍ ԱՄԵՆ ՕՐ ԱՂՈՒԹՈՒՄ ԵՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ»

2005 թ. ապրիլի 2-ին աշխարհի լրատվամիջոցները զուժեցին, որ 84 տարեկան հասակում վախճանվեց Յոզեֆ Կապլանը:

Սիլվանոյի Յոզեֆ Կապլանը Պոլոս Երկրորդ պապի հետ հանդիպման ժամանակ նրան նվիրեցի Գոշավանքի 13-րդ դարի նշանավոր խաչքարի պատճենը:

Պոլոս Երկրորդը դարձավ մի ամբողջ ազգի հավատը: Տիեզերական եկեղեցու տարեգրություններն ընդմիջտ հաստատելու են, թե ինչպես Հայաստանի բնակիչները եղան առաջինները, որպես ժողովուրդ, որոնք ընդունեցին մեր տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի շնորհը և ճշմարտությունը: Նա հայերենով ասաց. «Աստված օրհնի Հայաստանը»: Հաջորդ օրը Շիժոն-Մանկաբերդում, Մեծ եղեռնի հուշահամալիրում, նա հայերեն արտասանեց «Մեծ եղեռն» բառերը: Սրբազան Քահանայապետի այցով եղեռնի հուշահամալիր, մեկ անգամ ևս համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրվեց 1915 թ. հայկական ցեղասպանության վրա: Նա Շիժոն-Մանկաբերդի Լուսինյան պատին տեղադրեց Բենեդիկտոս 15-րդ պապի հուշաքարը, ինչպես նաև ցեղասպանության զոհերի թանգարանին հանձնեց սուլթանին ուղղված նրա ամսվար, որի մեջ Յոզեֆ Կապլանը ներտրոնրեբերին մեղադրում էր հայկական ջարդերի համար: Այնուհետև կատարվեց հոգեհանգստյան պաշտոն և Յոզեֆ Կապլանը իր աղոթքը մատուցեց առ Աստված. «Ով դատավոր ողջերի և մեռյալների, ողորմիր մեզ, լսիր ողբը, ով Տեր, ողբը, որ բարձրանում է այս վայրից՝ Մեծ եղեռնի վիհերից, կոչը մեռյալների, անմեղ արյան աղաղակը, որ աղերսում է Աբելի արյան պես ..., նայիր այս երկրի ժողովրդին, որ այսքան երկար ժամանակից ի վեր

զանգվածային ոչնչացումը ամբողջատիրական նախկին ռեժիմները ողբերգություններ են, որ տակավին ապրում են ներկա սերնդի հիշողության մեջ: Այս անմեղները, որ զանգվածաբար մորթվեցին, չեն սրբացվել, սակայն, նրանցից շատերը վստահաբար եղել են Քրիստոսի անվան խոստովանողներ և նահատակներ: Աղթում են նրանց հոգիների հանգստության համար և հորդորում, որ հավատացյալները երբեք չմոռանան նրանց զոհողության նշանակությունը»:



Յոզեֆ Կապլանը, կենտրոնում՝ Վենետիկի Սիբարյան միաբանության անդամ Հայր Ներսես վրդ. Տեր-Ներսիսյանը, այժմ՝ արքեպիսկոպոս, Հայ Կաթողիկե եկեղեցու Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմի առաջնորդ:

Վատիկանի պետության ղեկավար Յոզեֆ Կապլանը Պոլոս Երկրորդը: Նրա թաղման արարողությանը մասնակցեցին աշխարհի շուրջ 200 երկրների նախագահներ, թագավորներ, վարչապետներ, տարբեր կրոնական ուղղությունների հոգևոր առաջնորդներ, շուրջ 4-5 միլիոն հավատացյալներ: Յոզեֆ Կապլանը զմահավելեց որպես մարդկության պատմության ընթացքում երբևէ եղած ամենամեծ հուղարկավորությունը: Ազդեցիկ Հայաստանից մասնակցեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի և ՀՀ վարչապետի ղեկավարած պատվիրակությունը: Նրա մահվան կապակցությամբ ցավակցական հեռագրեր ուղարկեցին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, այստուհար և հոգևոր բարձրաստիճան այլ անձինք: ՀՀ նախագահի հեռագրում մասնավորապես ասված էր. «Այսօր հայ ժողովուրդը, ողջ քրիստոնյա աշխարհի հետ միասին, սգում է համայն մարդկության մեծ համակրանքին և պատկանանքին արժանացած Նորին Սրբություն Յոզեֆ Կապլանին»:

Յոզեֆ Կապլանը և քանիցս արտահայտեց. դրա առիավատյաներից էր այն, որ Յոզեֆ Կապլանը Պոլոս պապը դիմեց բացառիկ քայլի և 1994-ին մեր եկեղեցուն հանձնեց Ս. Թադևոսի և Ս. Բարդուղիմեոսի խաչքարը:



Վատիկանի «L'Osservatore Romano» թերթը 1992թ. մայիսի 28-ի համարում մանրամասն անդրադարձավ նախորդ օրը Յոզեֆ Կապլանի հետ հանդիպմանը:

...Երբեք չենք մոռանա Նորին Սրբության օրհնությունը, մեր ժողովրդի հանդեպ ունեցած մեծ հարգանքն ու ջերմությունը, որը լավագույնս դրսևորվեց Հայաստան կատարած պատմական այցի, ինչպես նաև այս տարի հունվարին Վատիկանում մեր ունեցած վերջին հանդիպման ժամանակը: Իսկ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հեռագրում նշված էր. «Մենք ջերմությամբ ենք հիշում մեր հանդիպումը Նորին Սրբության հետ Վատիկանում, ինչպես նաև նրա պատմական այցը Հայաստան 2001 թվականին: ... 26-ամյա գահակալության ընթացքում՝ Նորին Սրբություն Յոզեֆ Կապլանը Պոլոս Բ պապը եղավ մահաանձխնդիր պաշտպան և առաջնարտիկ արդարության: ... Վերջին տարիներին նրա ջանքերի և մեր երջանկահիշատակ նախորդների գործունեության շնորհիվ եղբայրական սերը և համագործակցության ոգին մեր երկու եկեղեցիների միջև մեծապես ամրապնդվել են»:

Սյր, հիրավի, երջանկահիշատակ պապը ձգտում էր ամրապնդել եղբայրական համագործակցությունը Կաթողիկե և Հայ եկեղեցիների միջև, և մեզ համար նրա կորուստը առավել ծանր է նաև նրանով, որ մենք կորցրեցինք հայ ժողովրդի անկեղծ բարեկամին: Երբ 1992թ. մայիսին որպես ՀՀ կառավարության անդամ կրոնի գործերի պետության փոխնախագահ Վատիկանում հանդիպեցի Յոզեֆ Կապլանի եկեղեցիների միաբանության (ժողովի) նախագահ, ժիրանավոր (կարդինալ) Աբիլյե Սիլվեստրինիին և Պետությունների հետ հարաբերությունների քարտուղար, արքեպիսկոպոս ժան-Լուի Թոմասին, նրանցից տեղեկացա, որ իրենց առանձնագրություններում Յոզեֆ Կապլանը և իր ջերմ վերաբերմունքն արտահայտում հայ ժողովրդի հանդեպ: Դրանում են անձամբ հանձնվեցի մայիսի 27-ին, երբ Վատիկանի «L'Osservatore Romano» թերթը 1992թ. մայիսի 28-ի համարում մանրամասն անդրադարձավ նախորդ օրը Յոզեֆ Կապլանի հետ հանդիպմանը:

իր վստահությունը Քեզ վրա դրեց, որ անցավ մեծ տառապանքի միջով և Քո հանդեպ հավատարմության մեջ երբեք չթերաջավ: ... Հայ ժողովրդին հասցված զարուհիների թռուցիկները խորապես խռովված մենք մեզ սարսափահար հարց ենք տալիս, թե ինչպե՞ս աշխարհը տակավին կարողանում է ճանաչել այսքան անմարդկային խոստովանությունը...: Իր խոսքի ավարտին նա հայերենով ասաց. «Տեր ողորմես, Քրիստոս ողորմես»: Եղեռնի զոհերը հիշատակվում էին նաև Նորին Սրբություն Յոզեֆ Կապլանի Պոլոս Բ պապի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի սեպտեմբերի 27-ին ստորագրած համատեղ հայտարարության մեջ. «Մեկ և կես միլիոն հայ քրիստոնյաների կոտորածը, որ ընդհանրապես համարվում է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, և դրան հաջորդող

Սյր, հիրավի, երջանկահիշատակ պապը ձգտում էր ամրապնդել եղբայրական համագործակցությունը Կաթողիկե և Հայ եկեղեցիների միջև, և մեզ համար նրա կորուստը առավել ծանր է նաև նրանով, որ մենք կորցրեցինք հայ ժողովրդի անկեղծ բարեկամին: Երբ 1992թ. մայիսին որպես ՀՀ կառավարության անդամ կրոնի գործերի պետության փոխնախագահ Վատիկանում հանդիպեցի Յոզեֆ Կապլանի եկեղեցիների միաբանության (ժողովի) նախագահ, ժիրանավոր (կարդինալ) Աբիլյե Սիլվեստրինիին և Պետությունների հետ հարաբերությունների քարտուղար, արքեպիսկոպոս ժան-Լուի Թոմասին, նրանցից տեղեկացա, որ իրենց առանձնագրություններում Յոզեֆ Կապլանը և իր ջերմ վերաբերմունքն արտահայտում հայ ժողովրդի հանդեպ: Դրանում են անձամբ հանձնվեցի մայիսի 27-ին, երբ Վատիկանի «L'Osservatore Romano» թերթը 1992թ. մայիսի 28-ի համարում մանրամասն անդրադարձավ նախորդ օրը Յոզեֆ Կապլանի հետ հանդիպմանը:

Յոզեֆ Կապլանը Պոլոս Երկրորդը 2001 թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ նախագահի և Ս.Ս.Ս.Ս. Գարեգին Բ-ի հրավերով ուխտագնացության գալով Հայաստան իր ներկայությամբ մեր շուրջ հաղորդեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնախմբությանը: Դեռ «Ձվարթնոց» օդանավակայանում, իր ողջույնի խոսքում նա մեջբերումներ արեց Դանիել Վարուժանի բանաստեղծություններից և ասաց. «Խորապես հուզվում եմ՝ մտածելով այս երկրում քրիստոնեական փառավոր պատմության մասին, որը, ավանդության համաձայն, իր սկզբնաղբյուրը գտնում է Թադևոսի և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչության մեջ: Յետագայում, Սուրբ Գրիգոր Լուսավորչի վկայության և գործունեության շնորհիվ, առաջին անգամ լինելով,



երբի 27-ին ստորագրած համատեղ հայտարարության մեջ. «Մեկ և կես միլիոն հայ քրիստոնյաների կոտորածը, որ ընդհանրապես համարվում է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, և դրան հաջորդող

զանգվածային ոչնչացումը ամբողջատիրական նախկին ռեժիմները ողբերգություններ են, որ տակավին ապրում են ներկա սերնդի հիշողության մեջ: Այս անմեղները, որ զանգվածաբար մորթվեցին, չեն սրբացվել, սակայն, նրանցից շատերը վստահաբար եղել են Քրիստոսի անվան խոստովանողներ և նահատակներ: Աղթում են նրանց հոգիների հանգստության համար և հորդորում, որ հավատացյալները երբեք չմոռանան նրանց զոհողության նշանակությունը»:

Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի մայր եկեղեցում Սրբազան Քահանայապետն ասաց. «Երբ Ս. Գրիգորի քարոզչության շնորհիվ Տրդատ Գ արքան դարձի եկավ, մի նոր լույս ծագեց հայ ժողովրդի տևական պատմության մեջ: Հավատի ընդհանրականությունն անբաժանելիորեն միացավ ձեր ազգային ինքնության հետ: Քրիստոնեական հավատը մնայուն կերպով արմատացավ այս երկրում՝ Արարատ լեռան շուրջը ժողովրդի, և Ավետարանի խոսքը խորապես ազդեց հայ ժողովրդի լեզվի, ընտանեկան կյանքի, մշակույթի և արվեստի վրա:

...Հայերը միշտ էլ մեծ հարգանք են ունեցել Քրիստոսի խաչի հանդեպ: Դարերի ընթացքում խաչը նրանց համար եղել է հույսի անսպառ աղբյուր՝ չարչարանների և տառապանքների ժամանակներում: Այս երկրի հոգեհույզ հատկանիշն են բազմաթիվ խաչքարերը, որոնք վկայում են քրիստոնեական հավատի նկատմամբ ամրապնդված հավատարմությունը»:

Սրբազան քահանայապետը հայ ժողովրդի մասին սրտառույզ խոսքեր ասաց նաև Մայր Աթոս Ս. Էջմիածնի Բաց խորանի քարոզի ժամանակ և խոր վիրապում, իսկ Հայաստանից մեկնելիս՝ հրաժեշտի խոսքում հիշեց Յոզեֆ Կապլանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունից մի հատված: Նա ցանկանում էր այցելել նաև աղետի գոտի և աղոթել երկրաշարժի զոհերի գերեզմանների վրա, բայց առողջական պատճառներով չկարողացավ:

Չորս տարի անց՝ 2005 թ. հունվարի 19-ին, Յոզեֆ Կապլանը Պոլոս Երկրորդը բացեց և օծեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի 5.7 մ. բարձրությամբ մարմարե արձանը, որը դրվել էր Վատիկանում, Սուրբ Պետրոսի տաճարի արտաքին որմնախորշում:

Յոզեֆ Կապլանի 27-ին նա Վատիկանում ընդունեց Հայաստանի նախագահ Ռ. Քոչարյանին, որը արտասահմանյան ղեկավարներից վերջինն էր, որ հանդիպեց պապին: Յոզեֆ Կապլանը Պոլոս Երկրորդը Հայաստանի ամբողջ ժողովրդին ու աշխարհասփյուռ հայությանն իր ողջույնները հղելուց հետո առանձնահատուկ մաղթանքներ փոխանցեց Լեռնային Ղարաբաղին. «Ամբողջ հոգով ցանկանում եմ փոխանցել իմ լավագույն մաղթանքները, որոնք վերաբերում են Ձեր փոքր հայրենիքում՝ Լեռնային Ղարաբաղում իրական, կայուն խաղաղության հաստատմանը: Դա կարող է բերել բռնությունից վերջնական հրաժարման և շահագրգիռ կողմի միջև համադրողականության վրա հիմնված երկխոսության հաստատմանը, ինչին կնպաստի ակտիվ միջազգային միջնորդությունը»:

Այդ, հայ ժողովուրդը կորցրեց իր անկեղծ բարեկամներից մեկին՝ Յոզեֆ Կապլանը Պոլոս Երկրորդին. արդյո՞ք մորընտիր պապը՝ Բենեդիկտոս 16-րդը իր նախորդի՝ Բենեդիկտոս 15-րդի մահից հետո ընդմիջեց կրթարձանի 1915-ին «ժամրոտն վշտահար ու բնաջնջման սեմին հասած հայ ժողովրդի» իրավունքների պաշտպանության համար, արդյո՞ք իր անմիջական նախորդի՝ Յոզեֆ Կապլանի Պոլոս Երկրորդի մահից կլինի Հայ և Կաթողիկե եկեղեցիների միջև եղբայրական սիրո և համագործակցության ջատագով, ցույց կտա ժամանակը: Ապրենք և հուսանք:

ՀԱԿՈՒ ԱՐՅԱՆ

ՊԱԹԵՏԻԿ ՖԱՆՏԱԶԻԱ

V

Ես արտասովոր եմ արևամուտին: Չկա ավելի անոթիչ մի պահ, երբ, ինչ էլ լինի, ուզում ես ապրել, ներել ու հուսալ, վիշտը մոռանալ: Չպետք է ողբալ փորձության ժամին. հետևանքն ունի անխույզ պատճառներ. Թե չգտնվի թո երազածը, երանի՜ տուր, որ կարող ես փնտրել: Ի՞նչ լավ է ապրել՝ թեկուզ միայնակ, թեկուզ զգալով, որ բախտ չես գտել, Ի՞նչ անեն քայլին գտնում եմ բերկրանք, քանի կարող եմ տեսնել, շոշափել: Եղևնիներն են մշուշը պատռող ինձ ապաքինում: Կարծիր արտուներ. Այն գետի մեջ ջու՛ր, թե՛ հուր է հոսում, իսկ հեռվում նորից կապույտ անտառներ: Տե՛ս, ծիրանագույն երկնքի ներքո գորշ-կանաչ ամպեր...Ո՞վ պիտի մարի Յրդեհն անտառում, եթե արևը, համգրվանելով, ծառերը այրի Ու հետո հալչի, հոսի գետի հետ՝ թափվելու համար հրավառ մի ծով, Որին չի հաղթի անձրևող գիշերը՝ ամպերի բազում կուտակումներով: Ի՞նչ միայնությանը է՛լ միայնակ չես. ես ի՞նչ եղբայր եմ, քույր եմ զբառառ, Ի՞նչ բարեկամ եմ ու ի՞նչ ընկերը, իր հորը գտած որդի միմուռար: Ի՞նչ ոգի, էակ ինձ պես կանոթի՜ առանց գտնելու կայուն հանգրվան: Ընկալող հայացք գուր որոնելով՝ կայրի, կքանդի, կերտածն անվարան: Կանխագագացումս չի կարող խաբել. կա՛ ինչ-որ մի տեղ իմաստ գոյության... Ով որ քրտինք է թափում հերկի մեջ, հողը, քարն անգամ չեն լքում նրան:

VII

Չկար մի արև՝ շող ու ճաճանջով՝ ընդհատելու հորը անձրևը երկնում... Ջուրն էր բարձրանում շուրջս պահ առ պահ, անըմբռնելի հոսքերով սպառնում: Երբ հեղեղումը ամեն ինչ հարթեց, իրականության պատկերը կորցրի... Նույն հաջորդությամբ պիտի վերհիշեմ դիպվածս՝ առնչված հեքին տարերքի: ... Կանգնում էին ծառերը բոլոր. ջուրը պտտվում, չէր մոտենում ինձ. Հանկարծ հորձանը բացեց մի ճամփա, որ ...չհապաղեմ փրկության ժամին: Այնինչ անվրդով – հողը գրկեցի՝ թափառումներից հարածուն՝ հոգնած... Տարերքներից զուրկ, անթույր ի՞նչ ասող էր առկայծում-պահվում, հուշերում կորած... Կառչեցի հողից՝ այն ակոսելով – դեռ չհամակված հույզերով պոռթկում... Մի մարմին դարձած մորն ու մանկանը վտանգի պահին հույսը չի լքում: Միրեցի հողը՝ հայրենիքի պես, տանս պատերին փարվել ցանկացա. Ծառերից մոտիկ, խե՛ծ ու քարերից ինչու՞ չի յուրավեց հյուղն իմ մշտաբաղձ: Բայց հորձանքները ճամփան փակեցին. բնագոյն ապրելու ընդվզեց անհաշտ. Եվ չէր դադարում անզուսպ ոգորել - կույր մտքից զատված իմ ոգին անպարտ: Անգամ ոսկիս՝ս գուցե օրհնելի, թե ձեռքը մեկներ մեծահոգաբար. Օգնել, փրկելը մեծ խորհուրդ ունի... նեցուկ չզգացի... չեղա փրկարար: Երանի՜ նրան, ով որ անձնագրի՝ կփրկի թեկուզ մեկին վտանգված. Երանի՜ նրան, ով վիատ, անօգ, կերջանկանա՛ լավ ընկեր գտած: Այս փորձությունն էլ ինձ չի խորտակի, որ դերն իր ստանձնի ժամանակն անկանգ, ճակատագիրը փուլեր կունենան ցավի... բերկրանքի, որ կկոչվի «կյանք»: Եվ ունի վերջին հարվածը հատու. եթե չի հասնում այն ժամանակին, Կարող է հոգին ուրտից հանել ու քշել ճամփով անհա՛յտ, դիվային: ...Մինչ լողում էի՝ կորստյամբ լեցուն, իմ հայացքի մեջ արև՝ թափանցեց. Չխնայելով ալիքը վերջին՝ գոյացած ծովից ցող էլ բռնեց: Գուցե մնայի՞ն ծառերը...դալար. սակայն չորացան, մույնիսկ այրվեցին. Շուրջս ամեն ինչ ատում էր. «Գնա՛, թո՛ղ չխաղաղվի երբեք թո հոգին»: Բայց երբ վառ գունդը պարզ մի կետ դարձավ, հույսի ճախրանքը ազա՛տ, անտրտուն, երևակվեցին ժառանգված գույներն, ու փորձեց ժպտալ բնությունը մուսնը: Տարածքը միրհող – ամուրջը կորցրեց, հենց որ լեռների եզրագծերը Հայկեցին, ինչպես ծյունը գինու մեջ՝ մոտիկն ու հեռուն միաձուլվելով: Մեկը ջինջ մթնում նշմարվեց հանկարծ, լուսնի պտույտը տատանսեց օդում. Ջանգերի մնամ՝ աստղերը զվարթ ողջունում էին երկնի Տիրուհուն: Թվա՞ց բախվեցին հայացքները մեր, երբ նա երևաց զխավերևում, հստացող-պայթող լույսերը անդարձ ջքանում էին մշուշ-խավարում:

Հակոբ Արյանը (Աշճյան) ծնվել է 1954թ. Երևանում՝ նկարչի ընտանիքում: Հայրը հայրենադարձվել է Գերմանիայից, մայրը՝ Ֆրանսիայից: Մայրական կողմից պապը՝ Աղասի Բյուսեյանը ջենիկցի էր. Սամսոնի գավառի Թերմե գավառակից: Եղբուն օրերի նրա հուշը՝ «Ապրիլ որպես հայ» վերնագրով տպագրվել է մեր թերթի ճախրող համարում: Հակոբը մանկուց տարվել է երաժշտությամբ ու նկարչությամբ, իսկ բանաստեղծություններ սկսել է գրել 22 տարեկանում: Մինչ այդ՝ 1972-75թթ. ծառայել է Սևծովյան ռազմական նավատորմում: 1979 թվականից բնակվել է Լեռնի գրադարան (Սանկտ-Պետերբուրգում), որտեղ աշխատել է կիրառական արվեստի բնագավառում՝ փորագրություն, մեդալագրություն, քանդակ: Այժմ բնակվում է Երևանում: Հրատարակում ենք հատվածներ նրա «Պաթեթիկ ֆանտազիա» պոեմից:



Մերկ արևների բուրբակները հազի՛վ թե ճկվող մութն էին հատում... Ինքս էլ չգիտեմ պատմությունը այս իրակա՞ն էր, թե խաղ անդրաբնում: Բայց հասնելու եմ խորքը խոհերիս, հանգելու կայուն եզրակացության... Բորբոքվող իղձը երբ չի մարմնանում, նախապայման է դառնում զորացման:

Ցավով եմ սիրում ներկան, ապագան. թո՛ղ գաղտնիքներով միտքս հալածեն, Անցյալի համար չեմ զոջա բնավ, առանց անցյալի չկա ապավեն: Բայց ես ուզում եմ կերպար ու շունչ տալ խուռն ապրումներիս ելեջներին. Ամեն նվաճում՝ սերը թե՛ծացնող, կենսագործում է հավատն անքնին:

XVII

Մի՞թե ծով է այն , ինչ ես եմ տեսնում , որ ալիքվում է առանց հատակի. Ցանաքից բա՛րձր , ամպերի նման՝ ափեր չունեցող եզրագիծ ունի: Ճայեր են հանդարտ շուրջը պտտվում՝ ինչպես ամպերի ճախրող ծվեմներ, Երևույթն անհայտ, անբացատրելի... մի ակնթարթ իսկ հրաշք է արդեն: Թեև այնքան էլ թափանցիկ չէ այն , ոչ՝ եթերային ու ոչ՝ նյութեղեն... Ամեն հայտնություն գաղտնիքն իր ունի, որ առի՞նքնում է հոգին համոզեն: Ճայերը վերից սուրուն, կռնչում, բայց չեն հանդգնում տարերքին հավել, Այնինչ սուր քամու նոր թափը, ահա, շարժուն կտոր է նրանից կորզել: Դետո կայծակներ կփայլեն այնտեղ... քիլ , խուսավարող իղձեր կլողան, Եվ արժե՛ որսալ գեթ մեկ խենթ ցնորը՝ խղճմտանքի դեմ մեղստ հավիտյան: Սիրում եմ ծովի մոռացված գույնը, բուրմունքն աննշան՝ հազիվ զգացվող. Կնոջ պես հաճո մերկայությունը ու հատկությունը նրա փոփոխվող: Այդ ե՞րբ պատարվեց, ծովացավ անշեղ՝ սիրո պես քնքուշ, հորդուն ու անափ. Ես – էլ չեմ զգա միայնությունս , եթե դեղեն խորքերում անխաբ: Տեղ-տեղ զուլալ է, տեղ-տեղ՝ գունախիտ, իր պարզության մեջ՝ հոգեհարազատ, Եվ կարոտում եմ տեսածս պահից, ուզում նրա մեջ լուծվել սիրառատ: Նրա տարերքն էմ ուզում ճանաչել , գրուցել հետը, լեզուն իմանալ, Եվ առագաստով լողալ կամենում, որ գտնեմ ափն իմ՝ բախտն անակնկալ: Խտացումները, ինչպես մեղուգա, պատրաստ են ահա նազանք-շուրջպարի. Գեղեցկություններ նրանք կդառնան, թե հոգուց բխած մի երգ տարածվի: Փոթորկից առաջ ժայռակոփ կղզու՛ հասնեն, զորամամ մրկող շանթերից... Խարթ սֆինքս ու մի քարթ թո՛ղ որ քարաման, երբ թափանցի լույսն ազդարարումի... Ու սիրտս բորբոք թո՛ղ վառվի կանչով՝ որպես խորհուրդը ցավատանջ վճռի, Լարված, մղումով՝ զոհվելու պատրաստ, թող ծի՛րն արձակեն հոգուս ծեսերի: Չեղբերիս, մարմնիս կեցվածքներ կտամ, երբ միտավորված՝ աչքերս շարժվեն՝ Որպես նռնաբար՝ ոգու ճառագմամբ չարիքը իսպառ հունդերով այրեն: Անիմանալիկ կդառնա ամկա. ամկան՝ կարծեցյալ ու մտացածին, Եվ կմոտենա ամենահեռուն՝ իր հրաշքներով օտար ցնորքին: Այս մտայնությամբ հանգիստ քնեցի, բայց հետո եկավ դաժան մի երագ, Ու երբ վեր թռա, ուրջի կանգնեցի... ծովից մնացած լուսաշերտ տեսա: Եվ ինչպես շղթա՝ թեք ժայռից սահող, ես կուտակվեցի ինքս ինձ վրա, Նորից քնի մեջ խորասուզվելով՝ տոկալու առժամ ներհոսին մահվան:

պատարվեց - լիուլի լցվեց
դեղեն - այս ու այն կողմ շարժվեմ

խարթ - անհագ, ցանկաներ
քարթ - թունավոր մեծ օձ



ՎԻՈՒԵՏԱ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԵՍ ՊՐԻՄՈՐՍԿՈՅԵ ԳՅՈՒՂԻՑ ԵՄ

Ես Աբխազիայի Գուդաուտայի շրջանի Պրիմորսկոյե գյուղից եմ, սովորում եմ Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկա և ինֆորմատիկա բաժնի առաջին կուրսում: Վերջերս, երբ եղա մեր գյուղում, այցելեցի մաև իմ հարազատ դպրոցը: Տնօրենը՝ հարգելի Ալիկ Սեֆերյանը, ինձ ցույց տվեց մի խունացած հին տետր: Այն կարդալով ես շատ ուրախացա, քանի որ նրանում գրված էր մեր դպրոցի պատմությունը: Տեսողը պատկանում էր դպրոցի նախկին ուսուցիչ Ավետիս Գրիգորյանին: Նա գրում էր. «Ծնվել եմ 1912թ. Վաղարշապատ գյուղաքաղաքում: Մանկությանս փշտո ճանապարհը անցել է Լեռնականում՝ Ամերկոմի մանկատանը: Սկզբնական կրթությունս ստացել եմ մանկատանը: 1928թ. որպես որդեգիր մանկատանից ինձ վերցրել է Անուխվայի բնակիչ Թովմյան Տիգրանը, իսկ մի տարի անց ապրել եմ Կոլմուտ գյուղում՝ Սեֆերյան Աբրահամի տանը: 1929-1932թթ. սովորել եմ Սուխումի հայկական մանկավարժական տեխնիկումում: 1932-33թթ. աշխատել եմ Կոլմուտ գյուղի դպրոցում որպես մանկավարժ, սակայն աշակերտների քրեության պատճառով 1934թ. դպրոցը փակվեց և ես տեղափոխվեցի Պրիմորսկոյե գյուղ և սկսեցի աշխատել այնտեղի դպրոցում»: Ավետիս Գրիգորյանի տետրից տեղեկացա մաև, որ

խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1924-25թթ. գյուղացիների միահամուռ աշխատանքով կառուցվել է մի փոքրիկ դպրոց, ավելի ճիշտ մի տնակ, որտեղ սովորում էին 20-25 հոգի: Արդեն 1927 թվին հիմք դրվեց մի նոր կրթօջախի, որը կառուցվեց փայտից և բաղկացած էր չորս սենյակից: Տարիների ընթացքում դասասենյակներն ավելացվեցին, ձեռք բերվեց կահ-կարասի և դպրոցը համապատասխանեց միջնակարգի չափանիշներին: Այն ժամանակ Պրիմորսկոյե գյուղը կոչվում էր Գոգիրո: Այժմ մեր տասնմեկամյա դպրոցում սովորում է 80 աշակերտ: Վրաց-աբխազական պատերազմից առաջ ուսանում էր 250 աշակերտ, բայց պատերազմի պատճառով շատերն արտագաղթեցին Ռուսաստան և տարբեր երկրներ: Նախկինում դպրոցի ուսուցիչների շարքերը պարբերաբար համալրում էին երևանի բուհերում կրթություն ստացած մեր դպրոցի շրջանավարտները: Դպրոցի տնօրեն Ալիկ Սեֆերյանը մույնպես կրթություն է ստացել Երևանում, ավարտել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի տեխնոլոգիայի ֆակուլտետը: 1985-ից աշխատում է գյուղի դպրոցում որպես ուսուցիչ, իսկ 1994-ից՝ տնօրեն: Նա իր ողջ եռանդը ներ է դնում որպեսզի դպրոցի վիճակը բարելավվի, նրա շնորհիվ մեր կրթօջախը հիմնամորոգվել է և բարետես դարձել: Այս վերջին այցիս ընթացքում, երբ եղա դպրոցում, գրուցեցի այս տարվա շրջանավարտների հետ: Ցավոք նրանց թիվը ընդամենը յոթն էր: Նրանցից չորսը լավ էին սովորում,



Պրիմորսկոյե գյուղի դպրոցի մանկավարժները:

րում, բայց ոչ ոք չէր ցանկանում Երևանում ուսումը շարունակել: Ավետիսյան Գայանեն ուզում էր մեկնել Սոչի և ընդունվել բժշկական համալսարան: Գուլյան Մարինեն շատ էր սիրում մաթեմատիկան, բայց չէր ցանկանում ուսումը շարունակել: Բոջոյան Նարինեն թեև շատ էր սիրում գրականություն, բայց ուզում էր դառնալ տնտեսագետ: Տղաները՝ Ջեբեյան Սերգեյը և Սեֆերյան Արթուրը սովորելու ցանկություն չհայտնեցին: Որո՞նք էին պատճառները. երկի Երևանում ազգականներ չունենալը, Հայաստանի բուհերում կրթության բարձր վարձավճարները և այլն: Այսինքն, նրանք ոչ թե չեն ցանկանում Երևանում ուսումը շարունակել, այլ պարզապես հնարավոր



Դպրոցի շենքը:



ԳՈՒԵԶԻԱ

ՄԵԴԱ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ցանդրիփշի Ավ. Իսահակյանի անվան դպրոցի տնօրենի դաստիարակչական գծով տեղակալ

ԱՅՍԵՆՂ Է ԻՍ ԶԱՅՐԵՆԻՔԸ

Որտե՞ղ եք փնտրում հայրենիքը իմ, Այստե՞ղ է, ահա՛, պատուհանից դուրս, Այս մշտադալար, սլացիկ սոճի՛ն Ու հողն այս հոգնած, որ դարձել է հույս:

Այս բա՛կն է եղել հայրենիքը իմ՝ Յոթ ամռան տապից շիկացած կարճես. Այստեղ խաղերում աննկատ անցավ Անհոգ մանկությունը իմ ժպտերես:

Այս ծո՛վն է եղել հայրենիքը իմ, Մրմունջ հուշեր է իմ մեջ փոթորկել. Մեղմիկ ծփանքը զուլալ ալիքի Օրորոցային իմ երգն է եղել:

Այս հա՛նդն է եղել հայրենիքը իմ Սարերի կանաչ ու թարմ գրկի մեջ. Փնտրել եմ այստեղ, այս կածաններում Լուսե ապագա տանող արահետ:

Այս գե՛տն է եղել հայրենիքը իմ. Իր պաղ ջրերի վազքով կարկաչուն Նրա ափերին բոբիկ վազվզել, Դիմավորել եմ կենսատու գարուն:

Այս օ՛ղն է եղել հայրենիքը իմ, Արևշատ լույսն ու երկինքը լազուր. Գիշերում շաղված հանդեսն աստղերի Կարծես հրաշք էր փռում ամենուր:

Այստե՛ղ է, ահա՛, հայրենիքը իմ, Իմ մանկան սևուկ աչքերում խնդուն, Նրա հայաբառ թոթվանքի մեջ... Բայց ինչ-որ մի ձայն կանչո՛ւմ է հեռուն...

Ես արդեն սկսել էի հավատալ, որ ինչ-որ բարի ու հեթանոսային մի գիշեր լուսե երազ եմ տեսել:
Դու կայի՛ր այդ երազում...
Այդ երազում միայն դո՛ւ կայիր...
Դու միայն այդ երազում կայիր...
Հետո լուսաբաց եղավ:
Լույսն իմ կուպերի տակից խլեց քեզ ու դու հալվեցիր իրականության խոժոռ ծալքերի մեջ:
Սկսել էի հավատալ:
Ու հանկարծ՝
Բարև՛...-
այնքան անսպասելի ու այնքան սպասված սակայն:
Բարև՛...-
շեմի վրա ինչ-որ էլեկտրական աղեղի պարպում:
Շեմից այն կողմ՝ աստղերի պարահանդես:
Շեմից այս կողմ՝
Բարև՛...-
աչքերս մշուշող արցունքը խանգարում է տեսնել քեզ՝ կա՛ս... չկա՛ս...
Ես քեզ զգում եմ միայն:
Զգում եմ, որ իմ կարոտը բերեց քեզ, բերեց, որ մի պահ-մերկայությամբ նորից ավեր փոթորկի, ու հանգստության ոչ մի շող չմնա իմ հոգում:
Իսկ ես արդեն սկսել էի հավատալ, որ ...երա՛զ եմ տեսել...

50 ՏԱՐԻ ԱՆՅ

Հայրենասիրություն երեխաների մեջ սերմանել է հայրս՝ Մինայան Գաբրիելը: Նրան հինգ տարեկան հասակում Տրապիզոնի մոտերքից Կովկաս է ուղարկել իր հայրը՝ Միսաջ



Հայրս՝ Գաբրիել Մինայանը և մայրս՝ Լուսիկ Վարելյանը:

պապս: Նա ոսկեդրամ է տվել մի թուրքի, որն իր մավակով հորս իր մոր՝ Արբուհի տատիս հետ բերել է աբխազական ափ: Այդ բնակավայրը կոչվել է Պիլինկովո (Փիլինգա), հետագայում Գանթաղի, իսկ այժմ՝ Ցանդրիփշ: Որոշ ժամանակ հետո եկել է ինքը: Նույն ձևով Տրապիզոնից եկել են մորս՝ Լուսիկի ծնողները՝ Վարելյան Սերոբը և Մեյրաբե նենես (տատս): Հայրս կրթություն չունեմ, ընդամենը չորս դասարան, բայց հրաշալի գիտեր հայոց պատմությունը, կարդացել էր մեր բոլոր պատմավեպերը: Բաժանորդագրվել էր տարբեր հայկական թեր-



Սուսաննա Մինայանը թոռնիկի՝ Միլենա Խաչարյանի հետ դպրոցի շեմին:

թեր և ամսագրեր, որոնցից շատերը մինչև օրս պահպանվել են մեր տանը: Հայրս մահացել է 1992թ., մայրս՝ 1975-ին:

Այն երանելի տարիներին, երբ հայաստանցիները հնարավորություն ունեին հանգստանալու Սև ծովի ափին, ամռանը մեր տունը դառնում էր մի փոքրիկ Հայաստան, իսկ սուրբ Էջմիածնից եկած մի վարդապետ գրել է բանաստեղծություն մեր ընտանիքի և

այդ ամառվա հանգստացողների մասին:

Ծնողներս իրենց հինգ աղջիկներին ուղարկել են հայկական դպրոց: Ամենամեծ քույրս՝ Աղավնին, վաթսու տարի առաջ է ավարտել Գանթաղի Ավ. Իսահակյանի անվան դպրոցը, իսկ ես՝ ամենափոքրս՝ քառասու տարի առաջ: Քառասու տարի առաջ՝ 1964-65 ուստարում մեր դպրոցում երգի-պարի համույթ հիմնադրեց ինքնու երգահան Բ. Շաշիկյանը: Նա Սուխումից Գանթաղի էր գալիս երեխաներին հայկական երգ ու պար սովորեցնելու: Կես տարի հետո համույթը սկսեց համերգներ տալ Գանթաղում և մոտակա գյուղերում: Ես նույնպես մասնակցում էի այդ համերգներին:

Հայրս իր երեք աղջիկներին ուղարկել է Երևան սովորելու: Քույրս՝ Վալենտինան և ես ավարտել ենք Երևանի պետական լսարանը (Վալենտինան՝ 1964-ին, ես՝ 1971-ին): Քույրերիցս երեքը ամուսնացան, մնացին Երևանում:

Համալսարանն ավարտելուց հետո, ըստ նշանակման, երկու տարի աշխատել եմ Եղեգնաձորի շրջանի Ռինդ գյուղում: Մինչև հիմա էլ հրաշալի հիշողություններ ունեմ այդ տարիներից: Քանի որ ծնողներս մեծակ էին, ես վերադարձա Գանթաղի: Որ դպրոցը որ կարիք էր ունենում օտար լեզվի ուսուցչի, այնտեղ էլ աշխատում էի: Դուստրս՝ Լուսինեն և որդիս՝ Ավետիսը, նույնպես ավարտել են Գանթաղի (Ցանդրիփշի) Ավ. Իսահակյանի անվան դպրոցը: Այս ուստարում թոռնիկս՝ Միլենա Խաչարյանը, որպես առաջին դասարանցի սկսեց սովորել նույն դպրոցում, ուր ես էի առաջին անգամ ոտք դրել 50 տարի առաջ: Համեմատած մյուս տարիների և ուրիշ հայկական դպրոցների հետ, 2004-2005 ուստարում ավելի շատ երեխաներ եկան առաջին դասարան (18 երեխա): Դա մեծ մասամբ առաջին դասարանի դասվար Նարինե Խաչարյանի շնորհիվ էր: Նա իր որդուն՝ Հակոբին էլ բերեց իր դպրոցը, իսկ հարևանները, որոնք կասկածում էին, թե ուր ուղարկեն իրենց երեխաներին, նույնպես ուղարկեցին այս հայկական դպրոցը: Այդ դասարանում կա նաև ուկրաինա-

ցի աշակերտ: Բայց միևնույն է, ռուսական դպրոց ուղարկողներն ավելի շատ են: Ավանդ հայկական է, շրջակա գյուղերում գործող դպրոցները միայն հայկական են: Եթե բոլոր հայերը իրենց երեխաներին ուղարկեն հայկական դպրոց՝ ռուսականներում համարյա երեխա չի մնա:

10 տարի առաջ նշվեց դպրոցի հիմնադրման հարյուր ամյակը, որին ներկա էին նախկին շրջանավարտներ, բազմաթիվ հյուրեր, այդ թվում ճանաչված քանդակագործ Ա. Բեգյանը, որը դպրոցի բակում տեղադրված Ավ. Իսահակյանի կիսանդրու հեղինակն է:

Եղել է ժամանակ, որ Ավ. Իսահակյանի անվան դպրոցում սովորել է 700-800 աշակերտ, իսկ հիմա նրանց թիվը ընդամենը 230 է: Այդ, Հայաստանից օգնում են, ուղարկում են դասագրքեր, բայց, ցավոք, չկան հայերեն տեսաժապավեններ, դիդակտիկ պարագաներ, հայերեն այլազան մյուլթեր:

Տարրական դասարաններում դիդակտիկ պարագաները ստեղծվում են ուսուցիչների կամ շնորհալի ծնողների կողմից: Ցանկալի էր ունենալ «Մեր այբբենարանը» տեսաժապավենը: Եթե դպրոցը համակարգիչ ունենա,



Դպրոցական հանդեսում:



Նարինե Խաչարյանի իր սաների հետ:

ավելի շատ ծնողներ կծագեն իրենց երեխաներին ուղարկել այս դպրոցը: Նրանք իրենց երեխաներին չեն ուղարկում հայկական դպրոց, նաև այն պատճառով, որ երեխաները հնարավորություն չունեն իրենց ուսումը շարունակել Հայաստանում: Ռուսաստանն ավելի մոտ է և մատչելի:

Անգլերենի և գերմաներենի մասին ուսուցչուհի ՍՈՒՍԱՆՆԱ ՄԻՆԱԼՅԱՆ Աբխազիա, Ցանդրիփշ

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորին շնորհակալություն ենք հայտնում նախկին քաղաքապարկյալ պարոն ԱՎԶՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ «Չայն համշենական» թերթի խմբագրությանը քառասունհինգ հազար դրամ նվիրելու համար:

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորին շնորհակալություն ենք հայտնում բոսփորնաբնակ պարոն ՆԱԿՈՒ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ «Չայն համշենական» թերթի խմբագրությանը պատկերաձուլ սարք (սկաներ) նվիրելու համար:

Գլխավոր խմբագիր
և համարի պատասխանատու՝
ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2433 ՀԱՄԱՆԵՆԿԱԿԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն:
Հասցեն՝ Երևան, Ա. Իսահակյան 18: Հեռախոս՝ (+374+10) 25 21 26:
Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.:
Խմբագրությունը ոչ միշտ է համակարգիչի հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեքենայի ղեկավարողը «Չայն համշենական» պարտավոր է:
«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ)
Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван)
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН
Газета распространяется бесплатно.
"HAMSHEN" Compatriotic-charitable public organization (Yerevan).
"DZAYN HAMSHENAKAN". Editor in chief SERGEY VARDANYAN
E-mail: dzaynhamshenakan@yahoo.com

ԴՈՒՋԻԱ

ԱՐՁԱԿ

ԴՈՒՅԻՎ

ԱՄԱՆՈՐԻ ՍԵՄԻՆ

ՉԱՅՆ
ՀԱՄՇԵՆԱԿԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՉԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան, Ա. Իսահակյան 18: Հեռախոս՝ (+374 1) 25 21 26:
Գրանցման վկայական՝ N 03Ա054979, տրված՝ 26.06.2002թ.:
Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Չայն համշենականին» պարտադիր է:

“ДЗАЙН АМШЕНАКАН” (ГОЛОС АМШЕНСКИЙ)
Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации “АМШЕН” (г. Ереван)
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНИЯН
Газета распространяется бесплатно.
“HAMSHEN” Compatriotic-charitable public organization (Yerevan).
“DZAYN HAMSHENAKAN”. Editor in chief SERGEY VARDANYAN
E-mail: dzaynhamshenakan@yahoo.com